

# ՄԱՐԶԻԿ

ՀԱՇՄ

Մարզիկ

Միջազգային Թանգրապիկ Միջազգային  
Միջազգային Թանգրապիկ Միջազգային

marzig

SPORTS MAGAZINE

հԸ ՏՄԻԻ, 2009, ԹԻԻ 11 (329) VOL. XXVIII N° 11    ՎՄԻԻ 11 - ՎՄԻԻ 11



Հ.Մ.Ը.Մ. ԱՐԵՒԵԼԵԱՆ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐ



# ՎԱՐՉԱԿԱՆ ՆՈՐ ԿԱԶՄԵՐ

Անցնող ամիսներում, Ներկայացուցչական իրենց ժողովները գումարեցին եւ նոր Շրջանային Վարչութիւններով օժտուեցան 3.Մ.Ը.Մ.ի Լիբանանի եւ Արեւելեան Մ. Նահանգներու շրջանները:

Քուէյթի, Ամմանի եւ Վալանսի մասնաճիւղերը, իրենց կարգին, գումարեցին անդամական ընդհանուր ժողովներ եւ ընտրեցին նոր վարչութիւններ:

Ստորեւ նորընտիր կազմերը՝ իրենց անդամներու աշխատանքային բաժանումներով.-

## ● 3.Մ.Ը.Մ. ԼԻԲԱՆԱՆ

Եղբ. Յակոբ Քէշիշեան- ատենապետ

Քոյր Մարօ Թազեան- ատենադպիր

Քոյր Սիլվա Սաղըրեան- գանձապահ

Եղբ. Միշէլ Տիբ խորոզեան- հաշուապահ

Եղբ. Յարութ Տէմիրձեան- ֆութպոլի ներկայացուցիչ

Եղբ. Սեպուհ Թոփալեան- պասքէթպոլի ներկայացուցիչ

Եղբ. Ներսէս Լիպարեան- սկաուտական ներկայացուցիչ

Եղբ. Վահան Յամամձեան- ԼԵՎԱՄ-ի ներկայացուցիչ

Եղբ. Յայկ Թապազեան- խորհրդական

Եղբ. Արտօ Աճէմեան- խորհրդական

Եղբ. Դրօ Մանտալեան- խորհրդական

## ● 3.Մ.Ը.Մ. ԱՐԵՒԵԼԵԱՆ Մ. ՆԱՅԱՆՉՆԵՐ

Եղբ. Պետիկ Տէր Վարդանեան- ատենապետ

Եղբ. Յովիկ Աբգարեան-փոխ ատենապետ

Եղբ. Լեւոն Սահակեան- ատենադպիր

Քոյր Երան Սիմոնեան- գանձապահ

Եղբ. Վարդան Ադամեան- մարզական ներկայացուցիչ

Քոյր Էլիզապէթ Դրամկոչեան- սկաուտական ներկայացուցիչ

Եղբ. Թորոս Ոսպիկեան- յարաբերական եւ քարոզչական

## ● 3.Մ.Ը.Մ. ՔՈՒԷՅԹ

Եղբ. Յակոբ Յովակիմեան-ատենապետ

Եղբ. Ասատուր Երեմեան- ատենադպիր

Եղբ. Ներսէս Օհանեան- գանձապահ

Եղբ. Անդրանիկ Գուգուեան- խորհրդական

Եղբ. Վազգէն Աւագեան- խորհրդական

Եղբ. Խաչիկ Սուազձեան- խորհրդական

Եղբ. Սկրտիչ Պէրպէրեան- խորհրդական

## ● 3.Մ.Ը.Մ. ԱՄՍԱՆ

Եղբ. Վարդգէս Տէրտէրեան- ատենապետ

Եղբ. Կարօ Եումձեան- փոխ ատենապետ

Եղբ. Մասիս Կիւոյեան- ատենադպիր

Եղբ. Յրաչ Շմբլեան- գանձապահ

Եղբ. Ժոզէֆ Տաուանի- հաշուապահ

Եղբ. Նշան Միսձեան- խորհրդական

Եղբ. Սեւան Չաքմաքձեան- խորհրդական

## ● 3.Մ.Ը.Մ. ՎԱԼԱՆՍ

Եղբ. Պօղոս Տէրտէրեան- ատենապետ

Եղբ. Վահէ Կօշկարեան- փոխ ատենապետ

Քոյր Քրիստին Տէրտէրեան- ատենադպիր

Եղբ. Փաթրիկ Տէրտարեան- գանձապահ

Եղբ. Ալէն Մնացիկեան- մարզական ներկայացուցիչ

Եղբ. Ժոէլ Քրտօ- խորհրդական

Եղբ. Արամ Սարգիսեան- խորհրդական

## ԱՐՄԱՆՏ ՔԻԼԵՃԵԱՆ

Համա-Յ.Մ.Ը.Մ.ական 8րդ մարզախաղերու նուիրուած «Մարզիկ»-ի բացառիկ թիւին մէջ, վրիպակով մը, Արեւմտեան Մ. Նահանգներու շրջանէն եղբ. Արմանտ Քիլեճեանի անունը շփոթուած էր Լոնտոնի շրջանէն եղբ. Արմանտ Աբրահամեանի անունին հետ: Հետեւաբար, յիշեալ բացառիկ «Պատասխանատուները» նիւթին (էջ 7) երկու Արմանտներուն մականունները պէտք էր կարդալ Քիլեճեան:

Վրիպակին համար կ'ապաւինինք մեր ընթերցողներու ներողամտութեան եւ պատմութեան համար նիւթը դարձեալ լոյս կ'ընծայենք, այս անգամ սրբագրուած ձեւով:

## ՀԱՍԱ-Յ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ

### ՏՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ

### ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Մանուէլ Մարսիլեան

Արմանտ Քիլեճեան

Վիգէն Աբէլեան

Օշին Փիրումեան

Հրաչ Շմաւոնեան

## ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ

### ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ

Մարզական ընդհ. պատասխանատու- Վիգէն Աբէլեան

Ֆութպոլ- Վազգէն Գալայձեան, Միսաբ Թաթիկեան

Պասքէթպոլ- Սեւակ Ադամեան

Լոդ, ճատրակ, փինկ-փոնկ- Արմանտ Քիլեճեան

Գործավարութիւն- Յասմիկ Սարգիսեան, Վերա Բարսեղեան

Լուսանկարչութիւն- photoplanet.am

Համացանցի կայքէջի աշխատանք- Վարուժ Միրզոյեան

## ԴԱՏԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Վահրամ Դանիէլեան

Արմէն Կէտիկեան

Մանուէլ Մարսիլեան

## ԴԱՏՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԲԱԺՆԻ

### ԴԱՍԱԽՕՍՆԵՐ

Գառնիկ Սկրտիչեան

Կիրօ Մանոյեան

## ՊԱՆԴՈՎՆԵՐՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ

Անահիտ Գոլանձեան





# ԹԻԼԻՆ ՆԻԼՆԵՐԸ

**MARZIG** SPORTS MAGAZIN EDITED MONTHLY BY HOMENETMEN  
 مارزىك مجلة رياضية شهرية تصدرها جمعية الهومنتمن الرياضي



Մարզական ամսաթիթ  
 Հրատարակութիւն՝ Հ.Մ.Ը.Մ.ի  
 ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ  
 ԻԸ. ՏԱՐԻ, 2009, ԹԻ 11 (329)

ԽՄԲԱԳԻՐ  
 Վիզէն Աւագեան

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՍ  
 Սեդա Պէշլեան, Սեւան Նազարեան

«ՄԱՐԶԻԿ»-Ի ՅԱԼՁՆԱԽՈՒՄԲ  
 Պատրիկ Կիւլպէնկեան  
 Աթո Սոսիկեան  
 Գօգօ Մկրտիչեան  
 Վահան Համամճեան  
 Տիրան Շահինեան  
 Սալբի ճէճէեան  
 Վահէ Թանաշեան

ԳՐՈՒԹԻՆՆԵՐ ՈՒՆԻՆ  
 Ներսէս Արք. Բախտիկեան\*, Անտոն  
 Ծ. Վրդ. Աղամեան, Գ. Թորոյեան,  
 Սալբի Լատոյեան  
 Եւ շրջաններու թղթակիցներ:  
 Էջադրում - Ջարեհ Չէօրէքճեան  
 Գրաշարութիւն - Վերա Բարսեղեան  
 Colour Separation - Photogravure Paklayan  
 Կողքի Ձեւաւորում՝ Տպագրութիւն



ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԷ  
 Պուրճ Համուտ, Ճինիշեանի Թաղ  
 «Սեւան» Շէնք, Գ. Յարկ  
 Հեռ: 01/248043, Fax: 01/260117  
 E-mail: marzig@homenetmen.org  
 P.O. Box: 80486 B. Hammoud, Lebanon

**ՑՐԻՈՒՄ**

Լիբանանի մէջ թերթին  
 հատվաճառի սակն է 3000 լ.ո.:  
 Տարեկան բաժանորդագրութեան սակ  
 ճշդութեամբ է 35000 լ.ո.:  
 Լիբանանէն դուրս թերթին  
 բաժանորդագրութիւնը  
 կը կատարեն Հ.Մ.Ը.Մ.ի Մեկուսի  
 Եւ Շրջանային Վարչութիւնները:  
 Թերթը ուղղակի Լիբանանէն  
 կը ստացուի անձնական  
 բաժանորդագրութեամբ  
 (Տարեկան սակ՝ Միջին Արեւելեան  
 եւ Եւրոպական երկիրներ \$50,  
 Ամերիկա եւ Աւստրալիա՝ \$55):



17

**Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ**

- Խմբագրական 2
- Մեր Տեսակցութիւնները 3
- Պատմութիւն 8
- Խօսքեր 10
- Անդրադարձ 12
- Մասնաձիւղէ Մասնաձիւղ 16
- Մեր Կորուստները 36

**ԲԱԺԻՆՆԵՐ**

- Միջազգային 14
- Մանկապատանեկան 38
- Տարբեր Հայեացքով 40



22

**ՇՆՈՐՀԱԽՈՐԱԳԻՐ**

Յարգելի խմբագրութիւն «Մարզիկ» թերթի, Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի  
 վարչութիւնը կը շնորհատրէ ձեր կատարած հսկայական աշխա-  
 տանքը, համա-Հ.Մ.Ը.Մ.ական ծրդ մարզախաղերուն նուիրում  
 «Մարզիկ»-ի բացառիկ թիւի պատրաստութեան առիթով:

Շնորհատրելի գործ, կարելոր ներդրում միութեան պատմութեան  
 համար:

Յարգանքներով՝  
 Հ.Մ.Ը.Մ.-ՖՐԱՆՍԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ





Հ Ա Յ Կ Ա Ն Կ Ե Ն Տ Ր Ո Ն  
Ի Ն Տ Ե Ր Ն Ա Կ Ա Ն  
Դ Ե Մ Ո Ք Ր Ա Տ Ի Կ Ա Ն  
Կ Ե Ն Տ Ր Ո Ն

# ԻՐԱՎ՝Ի ՄԱՐԶԻԿԸ

**Ո**րեւէ արժէք է օգտակարութեան գուրկ են այն մարզիկները, որոնք ըլլալով հանդերձ լաւ ֆուսպոլիստ կամ պասքեթպոլիստ, աթլէթ կամ լողորդ, չունին իրաւ մարզիկ մը պահանջուած բարոյական յատկանիշները:

Սկաւտութեան թէ մարմնակրթութեան նպատակը նոր սերունդի ֆիզիքական կրթութեան հետ, անոր բարոյական եւ հոգեկան արժէքներու մշակումն է:

Բարոյականով խոցելի, անտարբեր, անկարգապահ ու շփացած մարզիկներ իրենց պատկանած միութեան, ազգին, հայրենիքին ու ընտանիքին ի՞նչ օգտակարութիւն ունին: Անոնց շահած յաղթանակներն ու բաժակները խաբուսիկ երեւոյթներ են: Էական յաղթանակը՝ բարոյականի եւ նկարագրի մաքրութեան, դաստիարակութեան կարելորութիւնն է, որ յաճախ կ'անտեսուի:

Կեանքի տարբեր մարզերուն մէջ թերեւս մէկը կրնայ բարոյական երկու հակադիր ըմբռնումներու դիմելով յաջողութիւններ արծանագրել, բայց անըմբռնելի եւ անկարելի է, որ մարզական կեանքի մէջ մարդիկ կամ մարզական միութիւններ յաջողութիւններ արծանագրեն եւ օգտակար հանդիսանան, երբ կը տարութերին բարոյական ըմբռնումներու կիրարկման մէջ:

Մեր շուրջը, կեանքի գրեթէ բոլոր երեւոյթներուն մէջ, մարդոց խօսքն ու գործը, կենցաղն ու ընթացքը դիմակաւորուած է:

Աստուծոյ ծառաներէն սկսեալ մինչեւ քաղաքագէտները, պարզ արհեստաւորէն մինչեւ արուեստագէտը, դիմակաւոր դերասաններ դարձած են, օրուան եւ պահանջին համաձայն դերեր եւ կեցուածքներ կը փոխեն:

Բարոյական անկում, նկարագրի խաթարում, անտարբերութիւն կը նկատուի ամէնուրեք:

Թող ստեն, խարդախեն, դաւեն ու հայ-

հոյեն մարդիկ, որոնցմէ կ'ակնկալուի միայն ու միայն պարկեշտութիւն, հեզութիւն եւ բարիք:

Թող կեղծեն, մատնեն, դաւաճանեն անոնք, որոնք օրն ի բուն բարոյական արժանիքներ կը ծառեն:

Թող աշխարհի քաղաքագէտներն ու դիւանագէտները խաղաղութիւն, ազատութիւն եւ ժողովրդավարութիւն հողովեն, իրենց իսկ սադրանքներով քառսի վերածուած աշխարհին մէջ:

Բայց գէթ մենք՝ մարզական միութիւններս ու մարզիկներս ըլլանք ու գործով ցոյց տանք, թէ այն ենք, ինչ որ կը քարոզենք: Գործնապէս փաստենք ինչ որ միութեանական մեր սկզբունքները կը թելադրեն մեզի, որովհետեւ եթէ մենք ալ հետեւինք աշխարհի ներկայ Բարեկենդանի դիմակաւոր խեղկատակ բեմադրութեան, կը դառնանք չարիք մենք մեզի եւ մեր շուրջիններուն:

Իրաւ մարզիկը պէտք է ունենայ ազնիւ հոգի, մշակուած միտք:

Պէտք է ըլլալ պարկեշտ խօսքով, գործով ու մտածումով:

Պէտք է հեռանալ միտքն ու մարմինը վնասող միջավայրերէն: Պէտք չէ ընկերանալ բարոյականով սնանկացածներուն: Պէտք է աշխատիլ ինքզինք պահել հոգիով բարձր, նկարագրով մաքուր:

Կրնա՞նք «Յաղթանակէն ետք հանդիպիլ պարտութեան եւ նոյն ձեւով ընդունիլ զոյգն այդ խաբող»: Կրնա՞նք չարիքը փոխադարձել բարիքով, անարդարութիւնը դարմանել արդարութեամբ: Կրնա՞նք յարգել ու սիրել մեր մարզիկ եղբայրը, հայրենակիցը, թէկուզ հակառակորդը:

Ահա՛ իրաւ մարզիկի մը յատկանիշները, որոնցմով կարելի է կանխել քանիքանի՞ ցաւալի պատահարներ, կորուստներ եւ վնասներ:





«ՀԱՅԿԱԿԱՆ ՄՊՈՐՏԸ ԵՎ ՄԱՐՄՆԱԿՐԹՈՒԹԻՒՆԸ  
ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆՈՒՄ»  
ԳԻՐՔԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ

ԹՈՒՐԳԵՐԸ ԼՈՒՐՉ ԽՆԴԻՐ ՈՒՆԻՆ  
ԻՐԵՆՑ ՄԱՐԶԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ  
ՎԵՐԱՆԱՅԵԼՈՒ, ՎԵՐԱԹԱՐՄԱՑՆԵԼՈՒ  
ԵՎ ԶԱՅՆ ՎԵՐԱՏԻՆ ԳՐԵԼՈՒ

«ՄԱՐԶԻԿ» ԻՆ Կ' ԸՍԷ ՀԱՅԿ ԴԵՄՈՅԵԱՆ

Իբրև Հայկական Յեղասպանության Թանգարանի տնօրէն, ի՞նչն էր որ ձեզ մղեց հայ մարմնակրթութեան նուիրւած գիրքի մը հրատարակութեան: Ե՛րբ եւ ի՞նչպէս ծնաւ ձեր հետաքրքրութիւնը նիւթին հանդէպ:

- Յաճախ, նոյն հարցումը ես ալ կ'ուղղեմ ինծի: Պատմաբան ըլլալով, հետաքրքրութեան շրջանակը բաւական լայն է: Մօտէն հետաքրքրուած եմ Արցախի հարցով, հայկական գինանշաններով, հայկական ռադիարուեստի պատմութեամբ եւ այլ նիւթերով: Մարմնակրթութեան պարագային, հետաքրքրութիւնս ծնաւ դիպուածով մը:

2007ին, երբ Յեղասպանության Թանգարանի գրադարանը կը վերադասաւորէինք, ձեռքս անցաւ Շաւարշ Քրիսեանի «Մարմնամարզ» թերթին ամբողջական հաւաքածոն, որ կը գրտնուէր շատ անմխիթար վիճակի մէջ: Անմիջապէս թեյադրեցի, որ հաւաքածոն զրուկըի Մատենադարան՝ վերանորոգուելի էտք, երբ առաջին անգամ թերթատեցի գայն, մէջս ծնաւ մեծ հետաքրքրութիւն: Ամէն ինչ նորութիւն էր ինծի համար: Անծանօթ նկարներ, անծանօթ նիւթ, ինծի եւ շատ մը հայերու համար, յատկապէս Հայաստանի մէջ: Այնտեղ ես տեսայ նկարները մարգիկներու, ֆուլթպոլի խումբերու, որոնք մինչեւ 1915 գործած են Օսմանեան կայսրութեան մէջ: Այնտեղ ներկայացուած էր հայ մարմ-

նակրթական շարժումը, գաղափարախօսութիւնը եւ այդ գաղափարախօսութիւնը կրող ռահվիրաները:

Նկարներէն ետք, ուշադրութիւնս գնաց տպագրուած նիւթին: «Մարմնամարզ»ի մէջ տեղ գտած իւրաքանչիւր նիւթ յատկօրէն կ'արտացոլէր իր ժամանակի մտայնութիւնը, գաղափարները եւ չափազանց հետաքրքրական էր այն իմաստով, որ շատ մը նիւթեր ուղղակիօրէն կ'առնչուէին Յեղասպանութեան, հայկական երեւոյթներու հետ: Այս մէկը հետաքրքրութիւնս աւելի սրեց եւ մղեց, որ խորանամ նիւթին ուսումնասիրութեան մէջ:

Փետրուար 2008ին, այս նիւթին մասին դեկոյց մը ներկայացուցի հայ-թուրք պատմաբաններու ժողովի մը ընթացքին, ժրնեկի մէջ: Զեկոյցիս գլխաւոր միտքը այն էր, թէ Օսմանեան կայսրութեան մէջ մարմ-

նակրթութիւնը եղած է ազգայնականութիւններու մըրցակցութեան արտայայտութիւն, որովհետեւ եթէ լաւ սերտենք այդ շրջանի պատմութիւնը, պիտի տեսնենք, որ Երիտասարդ Թուրքերը իրենք է որ կը հովանաւորէին, կը ըստեղծէին այդ օրերու մարդական խումբերը եւ կը ջանային որ անոնք դառնան իթթիհատականներ: Հակադիր կողմի վրայ, շատ աշխոյժ էր Հ. Յ. Դաշնակցութիւնը՝ ամէնուրեք մարմնակրթական ակումբներ ստեղծելու իմաստով: 1913ին արդէն ի յայտ կու գան հայկա-





կան սկառուտական առաջին խումբերը: Պէտք է ըսել, որ այս այն շրջանն է, երբ Երիտասարդ Թուրքերու կուսակցութեան մէջ կը յաղթէ ազգայնականներու թեւը: Թրքական ազգայնականութիւնը կը շեշտուի լեզուի մէջ, տնտեսութեան մէջ, գազափարափոխութեան մէջ եւ այլն: Մարմնակրթութիւնը չէր կրնար հեռու մնալ անոնց ուշադրութենէն, որովհետեւ ան կը ստեղծէր մրցակցութիւն, յաղթող-պարտուողի տրամադրութիւն, ինչ որ կարեւոր էր իրենց համար: Թուրքը պէտք է միշտ տիրապետող ըլլար բոլոր մարզերու մէջ: Ի վերջոյ, քանի մը տարի ետք տեղի ունենալիք քրիստոնեայ բնակչութեան բռնազաղթը, ունեցուածքէ զրկելը, հայրենազուրկ դարձնելը նոյն այդ գազափարափոխութեան գործնական կիրարկումն էր:

**Հայաստանի մէջ մինչ այդ արծարծուած էր այս նիւթը:**

- Ժամանակին, նման նիւթեր շատ նեղ շրջանակի մը սեփականութիւնն էին: Այսօր պայմանները փոխուած են եւ այս նիւթին արծարծման իմաստով ընելիք շատ ունինք: Ազդանշանը տրուած է Սփիւռքէն, Բիւզանդ-Թորիկեանի «Պատմութիւն Հայ մարմնակրթական Ընդհանուր Միութեան» բազմահատորեակի հրատարակութեամբ: Բիւզանդ-Թորիկեան լուրջ աշխատանք կատարած է նիւթերու հաւաքման իմաստով, ինչ որ կրնայ հիմք ծառայել ապագայի գիտական ծաւալուն աշխատանքներու: Պէտք է

**Օսմանեան կայսրութեան մէջ մարմնակրթութիւնը եղած է ազգայնականութիւններու մրցակցութեան արտայայտութիւն, որովհետեւ եթէ լաւ սերտեմք այդ շրջանի պատմութիւնը, պիտի տեսնենք, որ Երիտասարդ Թուրքերը իրե՛նք է որ կը հովանաւորէին, կը ստեղծէին այդ օրերու մարզական խումբերը եւ կը ջանային որ անոնք դառնան իթթիհատականներ: Հակադիր կողմի վրայ, շատ աշխոյժ էր Յ. Յ. Դաշնակցութիւնը՝ ամէնուրեք մարմնակրթական ակումբներ ստեղծելու իմաստով:**

անպայման ուսումնասիրել հայ մարմնակրթական շարժումին պատմութիւնը, անոր գործունէութիւնը Սփիւռքի մէջ եւ անդրադարձը մեր ժողովուրդին վրայ: Այս մէկը իւրայատուկ, համազգային երեւոյթ է, որ ուսումնասիրութեան կարիքը ունի: Կ'արժէ գիտնալ, թէ մարմնակրթութիւնը ի՞նչպէս նպաստեց Սփիւռքի հայապահպանման աշխատանքներուն, հայկական գազութիւնները ներկայացնելու հարցին, Սփիւռքի միջգազութային կապերու ամրապնդման եւ այլն: Աղբիւրագիտական պաշարները, բարեբախտաբար, հարուստ են: Գազութիւններու մեծ մասը ունեցած է մարզական իր թերթերը, հրատարակութիւնները, որոնք լեցուն են նկարներով եւ տեղեկատու նիւթերով, ինչ որ հաստատիր հատորներու նիւթ կրնայ ըլլալ: Պատմութեան Հիմնարկը, Պետական Ակադեմիան կամ խումբ մը գիտնականներ կրնան այս գործին ձեռնարկել:

**Նշեցիք, թէ ձեր աշխատանքին մեկնակէտը «Մարմնամարզ»ի թիւերն էին: Այնուհետեւ, ի՞նչ նոր հորիզոններ բացուեցան ձեր դիմաց:**

- «Մարմնամարզ»ի նկարներով զմայլելու առաջին փուլին յաջողեց երկրորդ հանգրուանը՝ գիտական ուսումնասիրութիւնը, բնագրային վերլուծութիւնը, որովհետեւ այնտեղ կային թրքական ազգայնականութեան ցայտուն արտայայտութիւններ, մարզախաղերու եւ մարմնակրթութեան մրցակցութեան մարզին մէջ: Կը բաւէ կարդալ «Մարմնամարզ»ի 1912ի եւ 1913ի թիւերը՝ տեսնելու համար այս բոլորը: Հոն կը տեսնուին հայ մարզիկներու յաջողութիւնները Պոլսոյ միջազգային խաղերուն եւ թուրքերու կեցուածքը անոնց հանդէպ: Օրինակ, պէտք է կարդալ Շաւարշ Քրիսեանի «Մեր պատասխանը» խորագրեալ յօդուածը [«Մարմնամարզ», Բ. տարի, թիւ 20, 1912 Շնկտ. 15, էջ 366-367- «Մ.»], ուր ան կը պատասխանէ Սեյիմ Սըրի Օսմանեան «Թերպիէ» թերթին մէջ լոյս ընծայած գրութեան: Սեյիմ Սըրի արցունք կը թափէ, որ իր պանծալի ազգէն ոչ ոք եզած է Մթոքհոթլըմի 1912ի ողիմպիականին, ինչ որ ցոյց կու տայ այդ օրերուն թուրքերու անհազնացող ազգայնականութիւնը եւ անհանդուրժողութիւնը հայերու նկատմամբ, իբրեւ Օսմանեան կայսրութեան քաղաքացիներ:



Հայկ Դեմոյեան եւ Յ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Միհրան Շիմշիրեան կը թերթատեն «Մարմնամարզ»ի առաջին թիւերը:



Մթոքհոլմի ողիմպիականին Օսմանեան կայսրութիւնը ներկայացուցած են երկու հայեր՝ Մկրտիչ Մկրեան եւ Վահրամ Փափագեան: Սելիմ Սրբի կ'ուրանայ այդ իրողութիւնը եւ Շաւարշ Քրիսեան յիշեալ յողուածով ազդու պատասխան մը կու տայ, երբ մօտաւորապէս հետեւեալը կ'ըսէ անոր. երբ կոտորածի առիթ ըլլայ կը յիշէք որ հայեր ենք, իսկ երբ Օսմանեան հայրենիքը ներկայացնենք եւ լաւ բան ընենք՝ այդ ժամանակ մեզի օսմանցի կը նկատէք եւ մեր հայ ըլլալը կը մոռնաք:

Այս նիւթը զիս մզեց խորհրդածութեան: Անդրադարձայ, որ կարեւոր նիւթ է եւ կ'արժէ խորանալ անոր մէջ: Մինչ այդ, սակայն, յարմար պիտի ըլլար պատրաստել միջանկեալ հրատարակութիւն մը, որ մատչելի ըլլար բոլորին: Հոսկէ ծնաւ գիրքիս գազափարը, որ ինչպէս նախապէս շեշտեցի, կրնայ նորութիւն ըլլալ շատերու: Անշուշտ, յաւակնութիւնը չունիմ ըսելու, որ ամբողջութեամբ նորութիւն է անիկա, որովհետեւ ինձմէ առաջ ուրիշներ կատարած են երախտաշատ գործ: Կան բազմաթիւ հրատարակութիւններ: Բիւզանդ թորիկեանի գործը այդ գործերէն մէկն է: «Մարգիկ» ամսաթերթի յաջորդական թիւերը եւս կը պարունակեն ահագին նիւթ:

**Կրնա՞ք գազափար մը տալ գիրքին բովանդակութեան եւ բաժիններուն մասին:**

- Գիրքը վերնագրուած է «Հայկական սպորտը եւ մարմնակրթութիւնը Օսմանեան կայսրութիւնում»: Ան կը ներկայացնէ հայ կեանքի 1906-1922 երկարող տարիները: Սպորտը եւ մարմնակրթութիւնը իրարմէ անջատած ենք, որովհետեւ տարբեր բաներ են: Կարելի էր առանձնացնել նաեւ սկստականը, սակայն աւելի կեդրոնացած ենք մարմնակրթութեան վրայ, որպէսզի պատմական այդ պահը ճիշդ արտացոլուի, իսկ սկստականին համար յատկացուցած ենք յատուկ բաժին:

- Գիրքը ունի 12 գլուխ, հետեւեալ բաժանումով.-
- Սպորտի եւ մարմնակրթութեան զարգացումը Օսմանեան կայսրութեան մէջ:
- Հայկական սպորտի եւ մարմնակրթութեան զարգացումը Օսմանեան կայսրութեան մէջ:
- Մարզական եւ մարմնակրթական շարժումը Զմիւռնիայում:
- Սպորտի եւ մարմնակրթութեան զարգացումը Արեւմտեան Հայաստանի եւ Կիլիկիոյ մէջ:
- Հայ կինը եւ մարմնակրթութիւնը:

**Եթէ «Մարմնամարզ»ը հայկական թերթ չնկատէք, ապա ան Օսմանեան կայսրութեան մարզական առաջին թերթն է: Հայերէն լեզուով էր, բայց Օսմանեան էր: Ի հարկէ նաեւ հայերէն մարզական առաջին թերթն էր:**

- Հայկական ողիմպիական խազեր (1911-1914 թ.):
- Հայ մարզիկն եր ու մասնակցութիւնը միջազգային ողիմպիական խազերուն:

**ԾԱՆՕԹԱՑՄԱՆ ԱՆԴԱՄԱՔԱՐՏ**



Հայկ Դեմոյեան ծնած է 1975ին, Կիւմրի: 1998ին ան աւարտած է Երեւանի Պետական Համալսարանի պատմութեան բաժանմունքը, իբրեւ ազգագրագէտ, էթնոհոգեբան: Այնուհետեւ, իբրեւ պատմական գիտութիւններու թեկնածու, ան խորացած է Թուրքիոյ ժամանակակից պատմութեան ուսումնասիրութեան մէջ:

1990ին, Դոկտորայի իր թեզը պաշտպանելէ ետք, Դեմոյեան կը զբաղի Արցախի հարցի ուսումնասիրութեամբ եւ կը հրատարակէ Թուրքիան եւ Արցախի հարցը նիւթով մենագրութիւն մը, որ կ'արժանանայ նախկին Խ. Միութեան պատմաբաններու առաջին մրցանակին:

Ուսումնասիրական իր աշխատանքներուն կողքին, մինչեւ 2006, Դեմոյեան կը պաշտօնավարէ Երեւանի Պետական Համալսարանին մէջ եւ իր հետաքրքրութեան ծիրին մէջ կ'ունենայ կարգ մը նիւթեր, ինչպէս՝ հայ ինքնութեան պահպանման տարրերը, հայկական ռազմարուեստը, հայկական մարմնակրթութեան պատմութիւնը, հայկական զինանշանները եւ այլն:

Նոյեմբեր 2006ին, Դեմոյեան կը նշանակուի Հայկական Ցեղասպանութեան Թանգարանի տնօրէն:

Ցարդ ան հրատարակած է չորս հատորներ. «Հայկական զինանշաններ, դրօշներ, պետական պարգէներ» (2008), «Հայոց պատերազմները եւ ռազմարուեստը» մատենաշարի Ա. եւ Բ. հատորները՝ «Հայկական լեռնաշխարհի պրոնզէ դարեան սպառազինութիւնն ու ռազմարուեստը», «Վանի թագաւորութեան պատերազմներն ու ռազմարուեստը» (2009) եւ «Հայկական սպորտը եւ մարմնակրթութիւնը Օսմանեան կայսրութիւնում» (2009):

- Սպորտը եւ ազգայնական մրցակցութիւնը:
- Հայկական սպորտի կորուստը Մեծ Եղեռնի տարիներուն:
- Հայկական սպորտը յետ-պատերազմական տարիներուն (1918-1922 թ.): Հ.Մ.Ը.Մ.ի ստեղծումը:
- Մարմնակրթութիւնը հայկական որբանոցներուն մէջ:
- Հայկական սկստական շարժման ծնունդն ու զարգացումը:

Առաջին գլուխը ունի ընդհանրական բնոյթ: Երկրորդը առաջինին շարունակութիւնն է, բայց կարեւոր է իր եզրակացութեամբ, որովհետեւ ան դիտել կու տայ, որ եթէ բոլոր ասպարէզներու պարագային կարելի է խօսիլ համաօսմանեան



դրսեւորման մասին, ապա մարմնակրթութիւնը, կրթութեան հետ, եղած է ղուտ հայկական երեւոյթ: Ասոր լաւագոյն ապացոյցը Շաւարշ Քրիսեանի եւ Հինդլեանի փոքրիկ յօդուածաշարքն է եւ հատորեակը՝ «Հայ պոյ սկսուտներ»: Հոն երկուքը կը գրեն. հայկականացնենք, հայկականացնենք, ոչ թէ թուրքալի պէս կրկնենք ամէն ինչ, համադրեալս ըլլայ թէ գաղափարախօսութիւն: Ամէն ինչ պէտք է հայկական ըլլայ:

**Ուսումնասիրական որեւէ աշխատանք աւելիով կ'արժեւորուի, երբ անոր ընկերանայ պատմական արժէք ներկայացնող լուսանկար մը կամ փաստաթուղթ մը: Ձեր գիրքը հարուստ է նման նկարներով եւ փաստաթուղթերով: Ուրկէ՞ եւ ի՞նչպէս ապահոված էք դանոնք:**

- Նկարներու պարագային եւս պատահականութիւնը եղաւ այս հրատարակութեան օգտին: Գիրքի նկարներուն մեծամասնութիւնը «Մարմնամարզ»ի էջերէն են: Բնական է, որ 20րդ դարու սկիզբին հրատարակուած այդ նկարները որակի իմաստով այնքան լաւ չեն: Բայց մենք բախտաւորութիւնը ունեցանք այդ նկարներուն ընօրինակները ունենալու: Պատահամբ ծանօթացանք մարմնամարզիկ եւ լուսանկարիչ Գրիգոր Ջոլոբանի դաւկին՝ Փաթրիսին, որ մեզի տրամադրեց մեծածիւ նիւթեր, փաստաթուղթեր եւ լուսանկարներ: Այդ լուսանկարներուն մէկ մասը, բացիկներու ձեռով, հրատարակեցինք 2007ին, մնացեալը տեղ գտան այս գիրքին մէջ եւ դայն դարձուցին աւելի արժէքաւոր:

**Յաւելեալ նկարներու փնտռուտքը կը շարունակէ՞ք:**

- Անշո՛ւշտ: Ճիշդ հինգ վայրկեան առաջ ես արդէն նոր նկարներ յայտնաբերեցի, երբ «Մարզիկ»ի խմբագրատուն այցելելով, առիթը ունեցայ նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի թանգարանը տեսնելու եւ հոնկէ արժէքաւոր նկարներ ապահովելու:

**Մեկնելով ձեր գիրքին առաջին երկու գլուխներու բովանդակութենէն, կարելի՞ է ղուգահեռներ գծել հայ եւ թուրք մարդական պատմութիւններուն միջեւ: Որո՞ւն կը պատկանի նախապատուութիւնը առաջինը ըլլալու:**

- Իմ պրպտումներէս ի յայտ եկած առաջին եզրակացութիւնը այն է, թէ հայկական մարդական առաջին միութիւնները եւ անոնց ստեղծումը ցուցանիչ են արեւմտահայ կեանքի աւելի արդիական եղած ըլլալու իրողութեան: Ասոր կու գայ ամբողջացնելու հայ կրթական ցանցին ստեղծումը, արեւմտահայ սահմանադրութեան ստեղծումը, գրահրատարակչութիւնը, մամուլի առկայութիւնը, որ ստեղծեց թրքական մամուլը, հայկական թատրոնը, որ ստեղծեց թրքական թատրո-

**Պէտք է անպայման ուսումնասիրել հայ մարմնակրթական շարժումին պատմութիւնը, անոր գործունէութիւնը Սփիւռքի մէջ եւ անդրադարձը մեր ժողովուրդին վրայ: Այս մէկը իւրայատուկ, համազգային երեւոյթ է, որ ուսումնասիրութեան կարիքը ունի: Կ'արժէ գիտնալ, թէ մարմնակրթութիւնը ի՞նչպէս նպաստեց Սփիւռքի հայապահպանման աշխատանքներուն, հայկական գաղութները ներկայացնելու հարցին, Սփիւռքի միջ-գաղութային կապերու ամրապնդման եւ այլն:**

նը, եւ հայկական մարդական շարժումը, որ ուղղակի խթանիչ դեր ունեցաւ թրքական մարդական շարժումի ստեղծման մէջ:

Թրքական մարդական պատմութիւնը ներկայացնող թուրք պատմաբաններու գործերուն մէջ որեւէ յիշատակութիւն չկայ հայերու: Բոլոր գործերն ալ կը բաւարարուին ընդհանուր մէկ նախադասութեամբ, թէ այն ժամանակ, նկատի ունին Սուլթան Համիտի ժամանակը, կայսրութեան մէջ կային հազիւ քանի մը խումբեր, որոնք հիմնականին մէջ հրեաներ, յոյներ եւ հայեր էին: Ո՛չ մէկ խօսք «Պալթիման», «Արաքս», «Տորք», Սկիւտարի եւ Բերիայի ակումբներուն մասին:

Թրքական մարդական պատմագրութեան մօտ բացարձակ յիշատակութիւն չկայ 1912ի ողիմպիականին հայերու մասնակցութեան մասին եւ ասիկա խեղաթիւրում է: Եթէ մենք կը խօսինք Եղեռնի պարագային թրքական պատմագրութեան խեղաթիւրման մասին, նոյնը կարելի է ըսել

մարդական պատմագրութեան պարագային: Սեպտեմբեր 2008ին, Հայաստան-Թուրքիա Ֆութպոլի խաղի նախօրեակին, երբ մենք Յեղասպանութեան թանգարանին մէջ «Հայկական սպորտը Օսմանեան կայսրութեան մէջ» նիւթով ցուցահանդէս կազմակերպեցինք, շատ դարմացանք, երբ ելեկտրոնային նամակ ստացանք անձէ մը, որ թրքական ողիմպիական շարժման 100ամեակին առիթով հրատարակութիւն մը կը պատրաստէր եւ այդ առիթով վաւերագիրներ եւ լուսանկարներ կը խնդրէր մեզմէ: Բաւական հետաքրքրական էր: Մենք ի հարկէ ընդառաջեցինք ենթակային խնդրանքին: Իրենք հասկցան կամ իրենց հասկցնել ուղեցինք, որ այդպէս չեն կրնար շարունակել: Մեր կատարած աշխատանքը շատ կարեւոր է ո՛չ միայն հայ մարդական պատմութեան մէկ բացը գոցելու իմաստով, այլեւ՝ անոր համար, որ ան թրքական կողմին կ'ապացուցէ, թէ իրենք լուրջ խնդիր ունին իրենց սեփական պատմութիւնը վերանայելու, վերաթարմացնելու եւ դայն վերստին գրելու: Այս նպատակով ալ մենք կը ծրագրենք մեր գիրքը հրատարակել նաեւ օտար լեզուներով. անգլերէն, ռուսերէն, ֆրանսերէն եւ անպայման նաեւ թրքերէն, որովհետեւ մեր առաջին թիրախը թուրքերն են:

Աշխատանքներուս երկրորդ եզրակացութիւնը եղաւ այն, որ փաստերէն դատելով, յոյները մարդական կեանքի մէջ եղած են բաւական յառաջդիմած: Երբ Շաւարշ Քրիսեանի 1912ի եւ 1913ի գրութիւնները կը կարդանք, այնտեղ կը ըզգանք, որ հայերը արդէն հաւասարած են յոյներուն եւ տեղտեղ ալ որոշ առաւելութիւն ունեցած են անոնցմէ: Ասոր ապացոյցը Պոլսոյ միջադպարին մրցումներուն հայերու գրաւած դիրքերն են: Անոնք յոյներէն յստակ առաւելութիւն ու-



նեցած են հեծերարչաւի եւ թեթեւ ակտիւիզմի մրցումներուն: Յնցող էր 1912ին, Իգմիրի «Հայ Որսորդաց Ակումբ»ին Ֆուլթպոլի ախոյեան դառնալը, ինչ որ մեծ ազդեցութիւն կ'ունենայ թէ՛ Իգմիրի հայութեան, թէ՛ պոլսահայութեան եւ թէ՛ ընդհանրապէս: Եւ ինչն է հետաքրքրականը: Այդ ժամանակ ճիշդ է թրքական մարզական ակումբներ կը գործէին («Ֆեներպահչէ», «Կալաթասարայ»...), սակայն անոնք հիմնականօրէն Ֆուլթպոլի խումբեր չունէին: Ֆուլթպոլ խաղալը իսլամներուն արգիւրուած էր: Կարճ տափաստով մարզախաղով զբաղիլը արգիւրուած էր մինչեւ Երիտասարդ Թուրքերու յեզափոխութիւն, 1909:



Հայ եւ թրքական ակումբներու Ֆուլթպոլի առաջին յիշատակուած խաղը տեղի ունեցած է 1906ին: Խօսքը «Պալթիման»-«Կալաթասարայ» խաղին մասին է, որ ավարտած է 5-0 արդիւնքով՝ յօգուտ հայկական խումբին: Այս եզրուածութիւնը երբ 2008ի մեր ցուցահանդէսը այցելող թուրք լրագրողներուն եւ մարզիչներուն յայտնեցինք, անոնք ի հարկէ բաւական տխրեցան:

Կայ նաեւ հետաքրքրական այլ փաստ մը: 1912ին, երբ Իգմիրի ախոյեան «Հայ Որսորդաց Ակումբ»ը Պոլիս կը հրաւիրւի խաղեր խաղալու համար, թրքական երկու ակումբներ կը միանան անոր դէմ ճակատելու համար: «Ֆեներպահչէ»ի եւ «Կալաթասարայ»ի մարզիկները կը կազմեն միացեալ մէկ խումբ՝ դէմ դնելու համար «Հայ Որսորդաց Ակումբ»ին: Խա-

ղը կ'ավարտի 2-0 արդիւնքով՝ ի նպաստ թուրքերուն, բայց «Մարմնամարզ»էն կը տեղեկանանք, թէ օրուան իրաւարարը խաղը կը վարէ բաւական կողմնակալ ձեւով: Այս եզրութիւնը այսօր կը տխրեցնէ երկու ակումբներու երկրպագուները, ոչ թէ անոր համար որ թուրքերը խաղացած են հայկական խումբի մը դէմ, այլ՝ անոր համար որ թրքական երկու խումբ միացած են, որպէսզի յաղթեն հայերուն:

**Ի՞նչ կարելի է ըսել թրքական մարզական հրատարակութիւններուն մասին: Թուրքեր մարզական հրատարակութիւններ ունեցած են: Հայերէն առաջ թէ վերջ:**

- Այս մարզին մէջ, կարելի է անվարան ըսել, որ մենք առաջինն ենք: Եթէ «Մարմնամարզ»ը հայկական թերթ չնկատենք, ապա ան Օսմանեան կայսրութեան մարզական առաջին թերթն է: Հայերէն լեզուով էր, բայց Օսմանեան էր: Ի հարկէ նաեւ հայերէն մարզական առաջին թերթն էր: Թուրքեր հետեւեցան «Մարմնամարզ»ի օրինակին եւ իրենք ալ մարզական թերթ հիմնեցին, բայց չյաջողեցան «Մարմնամարզ»ի յաջողութիւնը ունենալ: «Մարմնամարզ»ը շարժում ստեղծեց, իր շուրջը երիտասարդութիւն համախմբեց, մինչդեռ Սելիմ Սրրի թրքական թերթը ձախողեցաւ այդ աշխատանքին մէջ եւ շուտով հրատարակութենէ դադրեցաւ:



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



*Feel at home, away from home...*

**Yerevan**  
 32-38, Hanrabedoutian Street,  
 Yerevan 375010, Armenia  
 Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50  
 sales@europahotel.am

Reservations

StudioFFA 2005-2006

[www.europahotel.am](http://www.europahotel.am)



# ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆԸ ՄԵՐՁԱԽՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ



Ներսէս Արք. Բախտիկեան (1911-1989)  
ԱՆՏԻՊ, ԺԴ. ՄԱՍ

**Կ**ազմակերպչական այս աշխատանքներէն ետք կ'որոշուի Մայիս 2ին արշաւ մը ունենալ, Հայէպի շրջանի Հ.Մ.Ը.Մ.ական առաջին արշաւը, բոլոր մարզիկ ու սկաուտ անդամներով եւ հոն, արշաւավայրին վրայ գումարել ընդհանուր անդամական ժողով:

Սկաուտներուն թիւը օրը-օրին կ'աւելնայ: Արձանագրւողներուն մէջ կան աղքատ տղաք, որոնց պէտք է հագուստ եւ այլ գոյքեր: Վարչութիւնը գոհացում տալու համար կ'որոշէ իր 4 Մայիսի նիստին ամէն գնով օգնել «անկարող կարող մը սկաուտներուն, գլխարկ, շապիկ ու պէտք եղածները տալով», որ չգրկուին սկաուտական կրթիչ բարիքներէն: Վարչութիւնը, որպէսզի կարենար հասնիլ նիւթական կարիքին, կ'որոշէ Յունիս 4, 1926ին, «Օրիանթալ»ի մէջ կազմակերպել մարդական եւ գեղարուեստական ցերեկոյթ մը, աւելի աղատ կերպով, որովհետեւ ան Յունիս 26, 1926ին, թիւ 432 վաւերագրով արդէն օրինականացած միութիւն էր պետութեան կողմէ: Այս հանդէսին փայլը աւելցնելու մտօք, Հայկաղեան վարժարանի հոգաբարձութենէն կը խնդրուի իրենց

փոքր աղջիկներուն մասնակցութիւնը եւ մարզական կարգ մը գործիքներ:

Վարչութեան խնդրանքին, ինչ կը վերաբերի աղջիկներուն, հոգաբարձութիւնը իր 10 Մարտ 1926 թուակիրով կ'ըսէ. «Հոգաբարձութիւնս, կարգ մը նկատումներով, յարմար չըստեց մարզանքի համար ուսանողուհիներ տրամադրել Ձեր յառաջիկայ սարքելիք հանդէսին»: Իսկ Հայէպի Առաջնորդարանը, Առաջնորդ Հօր ստորագրութեամբ, 12 Մայիս 1926ին, կը գրէ.

«Ազգային երկսեռ վարժարանաց հոգաբարձութենէն տեղեկացած ըլլալով որ վարչութիւնը յառաջիկային ներկայացնելիք իր ցերեկոյթին համար ազգային վարժարանի աշակերտուհիներէն ալ իր շարքերուն մէջ

առած է եւ մարզական փորձեր կը կատարէ, եւ նկատելով որ մեր միջավայրը չի ներեր որ աղջիկներ մարզական փորձերու մասնակցին ու կրնայ դժգոհանքներու տեղի տալ, ներկայիս կող գանք յանձնարարել, որ երբեք եւ երբեք չափահաս կամ անչափահաս աղջիկներ չառնուին Հ.Մ.Ը.Մ.ի շարքերուն մէջ»:

Մինչ վարչութիւնը զբաղած է սարքուելիք ցերեկոյթի պատրաստութեամբ, իր անդամներէն երեքը՝ Տիգրան Աղճայեան, Լեւոն Պապիկեան, Շաւարշ Պէքէրեան ճամբորդական իրենց պայուսակները կը կոծկեն: Վարչութիւն եւ անդամներ թէյասեղանով մը ճամբու կը դնեն իրենց ղեկավար ընկերները, որոնց աշխատանքին տակաւին շատ կարիքը ունէին: Վարչութեան մնացեալ անդամները լարուած ձիգերով կը հասնին 4 Յունիս 1926, երբ տեղի կ'ունենայ մարդական եւ գեղարուեստական ցերեկոյթը, նախագահութեամբ Առաջնորդ Հօր:

Այս ցերեկոյթը հազիւ լրացած, վարչութիւնը կը ստանայ նամակ մը, 7 Յունիս 1926 թուակիր, Հայէպի Աղգային Կարմիր խաչի գործադիր մարմինէն՝ ստորագրուած բժիշկներ Հրեշտակեանի եւ Պօղոսեանի կողմէ: Նամակը կ'ըսէ.

«Տեղւոյս մէջ տարիներէ ի վեր գործող Հայ Աղգային Կարմիր խաչը կաղմուած ըլլալով երեք հայ յարանուանութիւններէ, ստանձնած է անխտիր դարմանումը չբաւոր հայ հիւանդներու:

«Տիրող տնտեսական տագնապը թշուառութեան մատնած ըլլալով մեր դժբախտ ցեղակիցներէ շատերը Կարմիր խաչի դարմանատունը դիմող հիւանդներուն թիւը հետզհետէ բազ-



մապատկուած է, որով մեր նիւթական կացութիւնը կարի ծանրաբեռնուած է:

«Այս կացութեան դարման մը տանելու մտօք, ներկայիս կու գանք խնդրել պատուարժան վարչութեանէդ, որ հաճի մարմնամարդական ցերեկոյթ մը տալ ի նպաստ Կարմիր Խաչի սնտուկին:

«Վստահ մեր երիտասարդներուն ազգասիրութեան եւ դոհողութեան ոգիին, յոյսով ենք թէ պիտի չզլանաք ձեր շարքերը ի սպաս դնել յօգուտ հաղարաւոր հիւանդներու»:

Վարչութիւնը առանց դանդաղելու ընթացք կու տայ եւ մարդական, գեղարուեստական երեկոյթը՝ ի նպաստ Հայ Աղգալին Կարմիր Խաչին տեղի կ'ունենայ 24 Յուլիս 1926ին: Այս առթիւ Կարմիր Խաչի վարչութիւնը 10 Օգոստոս թուակիր նամակով կը գրէ:

«Պատիւ ունինք ձեզի հաղորդել մեր սրտագին շնորհակալութիւնները այն օժանդակութեան համար, զոր ընծայ բերիք Կարմիր Խաչին ի նպաստ տրուած երեկոյթին»:

Այս օրերուն իր հրաժարականը կը ներկայացնէ մարզիչուսուցիչ Լեւոն Աբգարեան առարկելով իր վճարումին ու մանաւանդ՝ «չուզեր որեւէ միջամտութիւն իր գործերակերպին մէջ»:

Վարչութիւնը նկատելով որ իր կազմէն շատեր մեկներ են, իր պաշտօնավարութեան ժամանակն ալ լրացած ըլլալով, կը գումարէ ընդհանուր անդամական ժողով, 8 Օգոստոս 1926ին, հոն օրակարգի նիւթ դարձնելով նաեւ մարզիչի հարցը:

Այս ընդհանուր ժողովէն կ'ընտրուի նոր վարչութիւն, որուն մաս կը կազմեն Կոպեռնիկ Մանսուրեան, Միհրան Կարապետեան, Լուտեր Մասպանաճեան, Սահակ Խաչատուրեան, Լեւոն Աբգարեան, Լեւոն Մուրատեան, Անդրանիկ Գաբրիւնեան, Եղեկիէլ Մինասեան:

Նորընտիր վարչութիւնը բծախնդիր ու հետամուտ իր շարքերուն ջամբելու մարմնակրթանք՝ առաջին օրէն իսկ կը հրահանգէ իր անդամներուն մարդանքի գալու շաբաթը երկու անգամ, որ կը կատարուի Աբգարեանի հսկողութեան ներքեւ, օգնական ունենալով Եղեկիէլ Մինասեանը: Իսկ Ֆուլթպոլիստները, անոնք ալ շաբաթը երկու անգամ փորձի պիտի գալին, դեկավարութեամբ Անդրանիկ Գաբրիւնեանի:

Նախորդ վարչութիւնը իբրեւ հաւաքավայր եւ ակումբ հազիւ ձեռք ձգած էր Աղդ. վարժարանի սրահներէն մէկը, հիմա այդ մասը աղջկանց բաժնի վերածուելու նոր ծրագրով, հոգաբարձութիւնը կը ստիպէ որ Հ.Մ.Ը.Մ.ը իր գլխուն ճարին նայի: Ակումբի դժուար հարցին հետ, նորընտիր վարչութիւնը կը դիմագրաւէ նաեւ մարզիչ Աբգարեանի մեկնումի խնդիրը Կիպրոս, Մելքոնեան հաստատութիւն: Իր դերը կը յանձնուի Եղեկիէլ Մինասեանին, հսկողութեամբ Կոպեռնիկ Մանսուրեանի:

Ակումբի համար կը դիմուի Չարսանձաքիներու Միութեան, իսկ դաշտահանդէս մը ժողովուրդին հրամցնելու համար, վարչութիւնը յարմար դաշտի մը ի խնդիր փնտռուողի կ'եղէ:



Գաշտահանդէսի յայտագրի պատրաստութեան համար, կը հրաւիրուին փորձառու անձեր, որոնք վարչութեան հետ համախորհուրդ, այդ աշխատանքը տանին: Մինչ այդ կը վարձուի շարսանձաքիներու վարժարանին մէկ սենեակը որպէս ակումբ ու կը հետապնդուի դաշտահանդէսի վայրի խնդիրը: Ֆրանչիսքեաններու վանքը բանազնաց Աբգարեանին կ'առաջարկուի դաշտահանդէսին բոլոր հասոյթը յատկացնել իրենց որբերուն: Ծանր էր առաջարկը նիւթական անձուկ վիճակ ունեցող միութեան մը համար: Կ'որոշուի Հայր Շատարեւեանին հետ Կարապետեան ու Մասպանաճեան կրկին դիմեն: Իսկ վարձուած ակումբը իր անյարմարութիւնով դժգոհանք կը պատճառէ: Ճարահատ, դիմում կ'ըլլայ Հայկադեան վարժարանի հոգաբարձութեան, որպէսզի իրենց տրամադրեն վարժարանին յարակից սենեակը, փոխարէնը իրենց խոստանալով շաբաթը երկու անգամ մարդանքի դաս Մանսուրեանի կողմէ:

Ռամի դաշտը ձեռք ձգելու ճիղերը ապարդիւն կ'եղին: Առանց յուսահատելու կը դիմեն Իւնիոն Սփորթիվի բարոյական օժանդակութեան ու Կարապետեան-Մասպանաճեան անգամ մը եւս կը դիմեն համաձայնութեան մը յոյսով: Այդ օրերուն, վարչութիւնը, նկատի առնելով Ֆուլթպոլի եղանակին բացումը, Պէյրութէն Հալէպ կը հրաւիրէ մարզիչ Պէքէրեանը:

Ռամի դաշտի պատասխանատուներուն անդրդուելի կեցւածքը կը ստիպէ վարչութիւնը, որ դիմէ կայարանի տնօրէնութեան: Իսկ դաշտահանդէսի յատուկ գործիքներու համար՝ նիղակ, սկաւառակ, ձող Հալէպի մէջ չգտնուելու պատճառով, կ'որոշուի գրել Պէյրութի մասնաճիւղին: Նոյն ատեն կոչ կ'ուղղուի եւ շրջաբերական կը հանուի Հալէպի բոլոր հայ մարզիկներուն հաւաքուելու համար:

(Շար. 14)



# ՊԱՐՏԱԻՈՐ ԵՆՔ ԵՐԷԿՈՒԱՆ ԳՈՐԾՈՂՆԵՐՈՒՆ ՅԻՇԱՏԱԿԸ ՍՏՈՒԵՐԻ ՄԷՋ ՉԶԳԵԼ

15 Նոյեմբեր 2009ին, Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան նախաձեռնութեամբ, Պէյրութի Ս. Նշան Սայր եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ հոգեհանգստեան պաշտօն՝ մահացած Հ.Մ.Ը.Մ.ականներու յիշատակին:

Աւանդութիւն դարձած հոգեհանգստեան պաշտօնին ներկայ գտնուեցան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը, Լիբանանի Շրջանային Վարչութիւնը, մասնաճիւղերու վարչութիւններու անդամներ, նախկին Կեդրոնական եւ Շրջանային Վարչութիւններու անդամներ, վեթերան մարզիկներ եւ սկաուտներ: Ներկայ եղան նաեւ ԼՕԽ-ի Շրջանային Վարչութեան եւ միութիւններու ներկայացուցիչներ: Հոգեհանգստեան արարողութեան նախագահեց եւ քարոզեց Փառէն Վրդ. Վարդանեան:

Յետ հոգեհանգստեան պաշտօնին, եկեղեցւոյ «Կարպիս եւ Արեգ Նազարեան» սրահին մէջ տեղի ունեցաւ յիշատակի հանդիպում, որուն ընթացքին Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Քէշիշեան արտասանեց հետեւեալ խօսքը:



PhotoRAFI

**Հ**Մ.Ը.Մ.ի Լիբանանի ընտանիքին համար աւանդութիւն է, որ ամէն տարի յարգանքի իր տուրքը կատարէ մեզմէ յաւերժ բաժնուած այն բոլոր Հ.Մ.Ը.Մ.ականներուն, որոնք ժամանակ մը առաջ մեր մէջ էին ու, վստահաբար, եթէ մեզի հետ ըլլային այսօր, անվարան կերպով պիտի շարունակէին իրենց անսակարկ նուիրումը բերել այս անդուգական միութեան:

Մենք, հաւատարմով մեղմէ անվերադարձ բաժնուողներուն յարգանքի տուրք տալու պարտաւորութեան, այսօրը կը վերածենք աւանդութեան, հաւատարիմ կերպով ոգեկոչելու համար յիշատակը ննջեցեալ բոլոր Հ.Մ.Ը.Մ.ականներուն, ըլլան անոնք սկաուտ, մարզիկ թէ վարչական գործունէութիւն տարած անդամ-անդամուհիներ:

Անոնք անցեալին մէջ գործած անմահներ են, որոնք համոզուած միութեան վեհ գաղափարին՝ գործեցին ու անցան:

Գործեցին անհաշիւ, տուին առանց սակարկելու, եւ նուիրեցան մինչեւ իրենց վերջին շունչը, ի նպաստ Հ.Մ.Ը.Մ.ի վսեմ գաղափարին եւ անոր իւրայատուկ «Բարձրացի-բարձրացուր» նշանաբանին:

Իրերայաջորդ սերունդներու դաւակներ տասնեակ տարիներու իրենց վաստակը ունեցան այս միութեան ուռճացման ու վերելքին մէջ, որ բազմաանարով ու ծլարծակելով, աշխարհի տարածքին դարձաւ 100 ճիւղերով անթառամ ու հաստաբուն ծառ մը:

Չենք կրնար մոռնալ այն բոլոր մարզիկներուն յիշատակը, որոնք երկար տարիներ քրտինք թափեցին բոլոր տեսակի դաշտերու վրայ, բարձր պահելու համար միութեան դրօշը:

Ի՞նչպէս չիշել այն վարչական քոյրերն ու եղբայրները, որոնք իրենց անձն ու «ես»ը դոճեցին, գրկուելով անձնական հաճոյքներէ, ու ժամանակ տրամադրեցին ծրագրելու եւ իրագործելու համար լաւագոյնը՝ ի նպաստ միութեան եւ յաջորդող սերունդներուն:

Ի՞նչպէս մոռնալ կակուղ թաթիկէն մինչեւ շեփորախումբերու անդամներն ու սկաուտական ամենաբարձր դիրքերու վրայ գործած մեր քոյր-եղբայրներն ու պատասխանատուները, որոնք անշահախնդիր մօտեցումով սկաուտական այբուբենը սորվեցուցին նորեկներուն եւ օր մը հպարտօրէն տողանցեցին հայկական թաղերուն մէջ թէ Մայիսեան փառատօններու ընթացքին:



Այո՛, ի՞նչպէս մոռնանք այն Հ.Մ.Ը.Մ.ականը, որ մահուան սնարին մէջ կը հետաքրքրուի Հ.Մ.Ը.Մ.ի մարզական լուրերով, կամ այն մարզիկը, որ իր հեծանիւր մէկ կողմ դնելով կ'երթայ նահատակուելու Ղարաբաղի լեռներուն վրայ:

Այս բոլորը պարտք կը դնեն մեր վրայ, որ ոգեկոչենք յիշատակը բոլոր անոնց, որոնք նուիրուեցան Հ.Մ.Ը.Մ.ին ու գործեցին Հ.Մ.Ը.Մ.ին համար:

Այո՛, պարտաւոր ենք երէկուան գործողներուն յիշատակը ստուերի մէջ չձգել:

Կ'ողբանք հին թէ՛ նոր մահացած բոլոր Հ.Մ.Ը.Մ.ական քոյրերուն ու եղբայրներուն կորուստը անխտիր եւ կ'ողբենք անոնց վառ յիշատակը, մասնաւորաբար յարգանքի տուրք տալով վերջին երկու տարիներուն մեզմէ բաժնուած հետեւեալ եղբայրներուն.- Ջոհրապ Պոսնոյեան, Վարուժան Գէորգեան, Յարութ Մնջրեան, Պերճ Պաստաճեան, Սեւակ Շը-

խրտումեան, Հայկ Խըլաքեան, Վահէ Չոքքարեան, Հրաչ Գենտիրճեան, Վիգէն Աղասարգիսեան, Ժիրայր Խաչատուրեան, Մանուէլ Այթունեան, Լեւոն Փանոսեան ու մեր վերջին անակնկալ կորուստը՝ եղբ. Շահէ Կիւվլէքճեանը:

Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան անունով ցաւակցութիւն կը յայտնենք Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան եւ Կեդրոնական Վարչութեան միջոցով Հ.Մ.Ը.Մ.ի համայն ընտանիքին, ու կը խոնարհինք մեզմէ յաւերժ բաժնուած բոլոր Հ.Մ.Ը.Մ.ականներուն՝ ամենահամեստ մարզիկէն ու սկառուտէն մինչեւ յանձնախումբերու թէ՛ վարչութիւններու մաս կազմած անդամներու եւ ամենաբարձր դիրքերու վրայ գործած ու անցած քոյրերու եւ եղբայրներու յիշատակին առջեւ:

Խոնկ ու մոմ անոնց անմահ ու անմոռաց յիշատակին:

# ՀԱՇՈՒԻ ՆՍՏԻԼ ՍԵՓԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԿԱՄՔԻՆ ՀԵՏ

Ստորեւ կու տանք Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի խօսքը, արտասանուած՝ 15 Նոյեմբեր 2009ին, հայ-թրքական համաձայնութիւններու դէմ Հ.Յ.Դ.ի եւ ՌԱԿի կողմէ կազմակերպուած հաւաքին:

**Հ**ամասփիւռ աշխարհի թէ՛ Հայաստանի մէջ անկախութիւն երազող, սեփական հայրենիքին մէջ ազատօրէն ապրելու իտէպով տոչորուած հայր, այսօր, վերջին ամիսներուն, իր մտասեւեռումն ու մտահոգութեան առանցքը դարձուցած է ո՛չ միայն չկորսնցնել Հանրապետութիւն դարձած իր երկրին սահմանները, այլ՝ պաշտպանել հայ ժողովուրդի արդար Դատին հետապնդումը ու վանել զայն կասկածի տակ առնող այժմու իրողութիւնը:

Հայ-թրքական համաձայնագրի ստորագրութիւնը բարի դրացնութեան եւ յարգանքի մթնոլորտի ազդանիշ չէ, այլ՝ միակողմանի, ու այս պարագային հայ ժողովուրդի շահերուն վնաս հասցնող համաձայնութիւն մը, որուն համար իր արդար զայրոյթը այսօր կ'արտայայտէ հայութիւնը ու անոր մէկ մասնիկը հանդիսացող Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը:

Ցեղասպանութեան իրողութիւնն ու զայն իրաւական հիմունքներու հասցնելու Սփիւռքի հայուն ճիգերը այսօր հարցականի տակ դնելու ու ոտնակոխելու ձգտումները մերժելի են բոլորիս համար:

Հայ ազգի համար ճակատագրական այս օրերուն, Հայաստանի Հանրապետութեան այսօրուան պետական ակազանին, ինքնագոհ ու ինքնագլուխ թուրքիոյ հետ բանակցութիւններ վարելու իր ձեռնարկին մէջ, պարտաւոր է հաշուի նստելու իր

ժողովուրդի կամքին հետ:

Պ ե տ ու թ ի ւ ն երազած հայր իր իսկ պետականութեան ձեռքով իր հայրենիքի ու պապերու փոխանցած աւանդին խաւարումը տեսնելու ո՛չ արժանի է եւ ոչ ալ պատրաստ:



Ժողովրդային մեր հաւատքը հայ ժողովուրդի արդար դատին ու արդարութեան ձգտող կանչ է:

- Ցեղասպանութիւնը, մէկուկէս միլիոն նահատակներու արիւնը խնդրոյ առարկայ չէ՝ ու չի կրնար դառնալ:
- Արցախի մէջ ազատամարտիկներու արեան գնով ձեռք բերուած յաջողութիւններն ու յաղթանակները մատի մէկ շարժումով շրջանցելը ընդունելի չէ եւ չի՛ կրնար դառնալ:
- Իսկ պատմական հողերէ գիջումը, սահմաններու անխախտելիութեան օրէնքով զայն հաստատելու թրքական փափաքը ո՛չ մէկ հայու կողմէ ընդունելի է եւ չի կրնար ըլլալ:

Արդ, Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքն ու հայ ժողովուրդը կը վստահին հայ մարդու առհաւական բնազդին ու կոչ կ'ուղղեն Հայաստանի Հանրապետութեան պատկան մարմիններուն՝ չվաւերացնելու այս ամօթայի ու ազգապնաս համաձայնագրին ստորագրութիւնը:



# ՏԻԹՐՈՅԹԻ Հ.Մ.Ը.Մ.Ի ՆԵՐԿԱՆ՝ ԱՊԱԳԱՅԻ ՀԵՌԱՆԿԱՐՈՎ

Անտոն Ծ. Վրդ. Ադամեան  
ՏԻԹՐՈՅԹ

Հայ պատանիին միտքն ու մարմինը մշակելու անհրաժեշտությունն է, որ ասկէ իննսունմէկ տարի առաջ ծնունդ տուաւ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան: Ան ժողովուրդի ծոցէն ժայթքեցաւ՝ իր արմատները արձակելու եւ տարածելու Միջին Արեւելքէն մինչեւ Եւրոպա եւ Ամերիկա, նոր կեանք եւ աւելն տալով աշխարհի չորս ծագերուն ցրուած հայ գաղթօճախներուն, որոնք իրենց կարգին սիրազեղ սրտով եւ խանդավառ ոգիով ողջունեցին, քաջալերեցին եւ ծաղկեցուցին զայն: Իր հիմնադրուածէնէն յիսունութ տարիներ ետք, 1976ին, երկար ճանապարհ կտրելէ ետք, Հ.Մ.Ը.Մ. հասաւ մինչեւ Միջիկրնի օրհնեալ ափերը, ուր վտարանդի թափառական հայր իր խաղաղ կայքը հաստատած էր ամեհի Ցեղասպանութենէն ետք:



Շնորհիւ նուիրեալ պատասխանատուներու, Հ.Մ.Ը.Մ. տարուէ տարի աճեցաւ եւ ունեցաւ մարզական եւ սկաուտական խումբեր: Քաղցր յուշերով, յիշատակելի անցեալ մը ունեցաւ ան Միջիկրն նահանգին մէջ:

Այսօր, Ամերիկեան ովկիանին մէջ հազիւ կաթիլ մը ջուր է հայութիւնը: Ան կը դիմագրաւէ գոյատեւումի մեծ վտանգներ: Այսպէս եւրոմը եւ օտարամոլութիւնը սարսափելի ահագանգներ կը հնչեցնեն, զգուշացնելու հին ու միջին սերունդը գերհզօր ճիգեր թափելու՝ պահելու համար հայ անհատին ինքնութիւնը, արթնցնելով եւ խոր գիտակցութեան հրաւիրելով մեր սերունդի հայորդիները՝ ծառանալու մեր ազգային դիմագիծը ջնջել սպառնացող զանազան հոսանքներուն դէմ: Այս վտանգին դէմ հայ լեզուն կը կանգնի իբրեւ անխորտակելի պատուար: Հայօրէն շնչել, խորհիլ ու խօսիլ: Հայաբար ապրիլ ու գործեր: Հայկականութիւն բուրել չորս դի: Այս է սրբազան գործը, գոր պարտինք եկեղեցիով, կազմակերպութիւններով, միութիւններով, դպրոցներով եւ ակումբներով յառաջ տանիլ՝ հայ մանուկ, պատանին եւ երիտասարդը ազատելու համար հրապոյրներով յի այս խաբեպատիր աշխարհի աքցանէն, որ օրէ օր մեր գաւազները կը մղէ մոլոր ճամբաներ: Մեր փրկութեան լաստն է ապագայի տարրը՝ երիտա-

սարդը: Երբ զայն շահինք, ուղիղ ճանապարհի մէջ դնենք՝ այն ատեն մեր ապագան կը փրկենք:

Իրենց նուիրական առաքելութեան գիտակցութեամբ գօտեպնդուած, քսանմէկերորդ դարու այս կարեւոր հանգրուանին, այսօրուան բժախնդիր պատասխանատուները կը ջանան նոր թափ տալ Հ.Մ.Ը.Մ.ին՝ առաւել զրաւիչ եւ նոր սերունդի պահանջներուն համապատասխանող միութիւն մը դարձնելով զայն: Այս նպատակը իրականացնելու համար, մարզական տարեկան միջ-մասնաճիւղային խաղերու առընթեր, անոնք կը կազմակերպեն միտք ու նկարագիր կերտող սեմինարներ, դասախօսական ելոյթներ եւ բանակումներ: Դժուարութիւնները եւ արգելքները ահագին են եւ ճնշիչ, սակայն ազգին ծառայելու վճռակամութիւնը աւելի ուժեղ է: Ան կը պահանջէ անձնուրաց նուիրեալներ, որոնք մոռնալով իրենք զիրենք, իրենց հանգիստը, նոյնիսկ ընտանիքը, անխառն ուրախութեամբ պիտի նետուին ճակատագրական պայքարի այս հրապարակը, իբրեւ կամաւոր գործիչներ՝ իրենց տուրքը ընծայելու բազմաշարքար հայ ժողովուրդին: Հազուադէպներ են այս ընտրեալները, որոնք կը կազմեն ցեղին դիմադրականութեան եւ տոկունութեան ամուր պարիսպներէն մէկը: Մշակին միակ հոգը իր հողին բերրիութիւնն է, իսկ նուիրեալին հոգը իր անսակարկ ճիգերուն արդիւնաբերութիւնն է: Մշակէն եւ նուիրեալէն աւելի ոչ ոք կրնայ արժեւորել ու գնահատել հողին սրբութիւնը եւ անձնուրացութեան վեհութիւնը:

Այսպէս, մեծապէս պատուաբեր եղաւ Տիթրոյթի Հ.Մ.Ը.Մ.ականներուն բերած մասնակցութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Մ. Նահանգներու միջ-մասնաճիւղային անցնող տար-



լան խաղերուն՝ Ռոտ Ալլոնտի մէջ, ուր անոնք հանրութեան ներկայացան իբրեւ օրինակելի հայորդիներ, մարզական բարձր ոգիով օժտուած, նկարագրի տէր ազնիւ արիւնք եւ արենոյճներ:

Այս է ազգային եւ մարդկային նպատակը Հ.Մ.Ը.Մ.ակա- նին, ըլլալ ջանակիր գաղափարի, ունենալով առողջ միտք, վեհ բարոյական՝ առողջ մարմնի մէջ:

Խաղերէն ետք տեղի ունեցաւ նաեւ բանակում մը տեղւոյն Հայ Կեդրոնին մէջ: Խինդ ու ժպիտ կար դէմքերուն վրայ: Ու- րախոսութիւն մը կը համակէր փոքրերը եւ մեծերը, ծնողները, վարչականները եւ խորհուրդի անդամներուն սրտերն ու հո- գիւնները: Խմորը կա՛յ: Աշխատի, տքնի՛լ պէտք է զայն լաւ մը շաղելու եւ իբրեւ քիմք օժող լաւաշ հաց հրամցնելու ազգին:

Ի սրտէ կը շնորհաւորենք անոնք որոնք կը համագործակ- ցին Հ.Մ.Ը.Մ.ի կառույցը ամրացնելու եւ զարգացնելու հա- մար: Հ.Մ.Ը.Մ.ի յառաջդիմութիւնն ու գոյատեւումը յառաջ- դիմութիւնն է համայն հայութեան:


Տիկերոյթհայ Արի՛, կանչուած ես ամերիկեան հսկայ ու- կիանին մէջ ըլլալու լոյսի փարոս, դէպի ապահով ափեր հասցը- նելու կորսուած քոյրերդ եւ եղբայրներդ, որպէսզի անոնք չընկղմին վատասերումի այեկոծումներուն մէջ:

Քաջարի՛ ազգի զաւակ, Հայկեան նետը ձեռքիդ, Վարդանի արիւնք երակիդ՝

«Հերթը հիմա քոնն է մի պահ,  
Դու էլ նայիր սէգ կատարին, ու անցիր»:

## ՄԱՐԻՈՍ ԿԱՐՈՅԵԱՆԻ Ի ՊԱՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ԶԵՌՆԱՐԿԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ

27 Նոյեմբեր 2009ի երե- կոյեան, Յ.Ս.Ը.Մ.ի Կեդրո- նական Վարչութեան ան- դամ եղբ. Կարպիս Գապա- սագալեան Նիկոսիոյ մէջ մասնակցեցաւ Կիպրոսի խորհրդարանի նախագահ Մարիոս Կարոյեանի ի պա- տի կազմակերպուած յա- տուկ հանդիսութեան, որուն ընթացքին Կարոյեան հռչակուեցաւ «2009ի Հայ Դատի անձնաւորութիւնը»:



Հանդիսութեան ընթացքին խօսքեր արտա- սանեցին Վահան Այնէճեան, Կիպրոսի Հայ Դա- տի Յանձնախումբի ատենապետ Յակոբ Մա- նուկեան, Յ.Յ.Դ. Բիւրոյի անդամ Սկրտիչ Սկրտիչեան եւ Մարիոս Կարոյեան:

Հանդիսութիւնը ընդգրկեց գեղարուեստա- կան յայտագիր: Աւարտին, տեղի ունեցաւ ըն- դունելութիւն:

**ARMENIA**  
for private and group trips  
[www.saberatours.fr](http://www.saberatours.fr)

# Saberatours Sevan Voyages

WITH THE COLLABORATION OF  
THE NEW AIRLINE COMPANY

Armavia  
Արմավիա

Photos: © Yarm-Artube-Berlingo, Yerevan, France. Licence 075 960031. Studioart.com

Direct Flights  
PARIS  
YEREVAN  
PARIS

Select  
your Journey

Guided Tours  
for 8 Days  
or 12 Days

11, rue des Pyramides  
75001 Paris  
tel 331 42 96 10 10  
fax 331 42 96 18 77  
saberatours@selectour.com

48, cours de la Liberté  
69003 Lyon  
tel 334 78 60 13 66  
fax 334 78 60 92 26  
sevan@selectour.com

67, La Canebière  
13001 Marseille  
tel 334 95 09 30 60  
fax 334 95 09 30 61  
marseille@wasteels.fr

32-38, rue Hamrabadoutian  
Yerevan  
tel 374 10 52 55 55  
fax 374 10 56 40 30  
saber@armenco.com





# ՄԱՏՐԻՏԻ ԱՐՔԱՅԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Երբ կը խօսուի երոպական ֆութպոլի մասին, անմիջապես կը մտաբերենք կարգ մը մեծ ակումբներ, որոնք իրենց դրոշմը ձգած են ֆութպոլի պատմութեան վրայ եւ իրենց ներկայութեամբ հարստացուցած, ճոխացուցած եւ յատուկ «համ ու հոտ» տուած են իրենց մասնակցած մրցաշարքերուն: Այդ ակումբներու շարքին կը պատկանի Սպանիոյ «հսկաներէն» Ռէալ Մատրիտը, որ կը դասուի աշխարհի լաւագոյն 10 ակումբներու շարքին:

Հարուստ պատմութիւն ունի մայրաքաղաքի արքայական այս կազմը: Իր հիմնադրութենէն մինչեւ օրս ան տեւաբար կը խլէ տիտղոսներ, կը հարստացնէ բաժակներու իր հաւաքածոն, իսկ գլխաւորը՝ անկասկած, անոր ներկայացուցած գեղեցիկ ֆութպոլն է եւ աստղերու հաւաքատեղի ըլլալը:

## Գէորգ Թորոյեան ՊԵՅՐՈՒԹ

**Մ**ատրիտի Ռէալը հիմնուած է 6 Մարտ 1902ին: Իր հիմնադրութենէն երեք տարի ետք՝ 1905ին ան կը տիրանայ Սպանիոյ բաժակին: Մինչ այդ, սակայն, 1903ին ան կը հասնի աւարտականին եւ կը պարտուի Աթլետիքո Պիլպատոյէն:

1932ին եւ 1933ին Ռէալ կը տիրանայ Սպանիոյ ախոյեանութեան՝ հանդիսանալով առաջին խումբը, որ երկու տարի յաջորդաբար կը տիրանայ ախոյեանութեան: Ռէալի առասպելական յաղթանակները կը սկսին 1950ական թուականներուն, երբ խումբին մաս կը կազմեն 1954ի Հունգարիոյ հաւաքակալի խաղացողներէն հոյլ մը: Այդ թուականէն ստղին Ռէալ «կը հնձէ» ու «կը հնձէ» տիտղոսներ: Յարդ, ան Սպանիոյ ախոյեան հանդիսացած է 31 անգամ (մրցանիշ) եւ փոխ ախոյեան՝ 18 անգամ: Սպանիոյ արքայական բաժակին տիրացած է 17 անգամ եւ փոխ բաժակակիր դարձած է 19 անգամ: Սպանիոյ Լիկայի բաժակին տիրացած է մէկ անգամ եւ անգամ մըն



ալ դարձած է փոխ բաժակակիր: Իսկ Սպանիոյ «Սուփըր Քափ»ին տիրացած է ինը անգամ եւ պարտուած է երեք անգամ:

Ուշագրաւ է, որ Մատրիտի Ռէալը աւելի շատ յաջողութիւն արձանագրած է երկրի ախոյեանութիւններուն՝ քան բաժակի մրցաշարքերուն, ի տարբերութիւն իր ռիբերիմ մրցակից Պարսելոնային: Այս երեւոյ-

թին բացատրութիւնը կը կայանայ միայն մէկ իրողութեան մէջ. ախոյեանութեան մրցաշարքը աւելի հետեւողականութիւն եւ վճռակամութիւն կը պահանջէ: Վիճակագրութիւնները ցոյց կու տան, որ Ռէալ աւարտական մրցումներուն (բացի «Չեմփիընզ Լիկ»ի մրցաշարքէն) աւելի հակամէտ եղած է պարտութիւն կրելու: Այլ խօսքով, մէկ մրցումով ճակատագիր ճշդութեամբ պարագային անոր յաջողութիւնը չէ երաշխաւորուած:

Բնականաբար, Ռէալի յաջողութիւնները չեն սահմանափակուած միայն Սպանիոյ մէջ: 1955-1956 տարեշրջանին ան կը տիրանայ Եւրոպայի Ախոյեաններու Ախոյեանի (ներկայի «Չեմփիընզ Լիկ»ը) առաջին տիտղոսին: Այնուհետեւ հինգ տարի բաժակը կը մնայ սպանացիներուն մօտ (մրցանիշ): Ռէալ ցարդ ինը անգամ տիրացած է այդ տիտղոսին (դարձեալ



մրցանիչ) եւ երեք անգամ պարտուած է աւարտականներուն:

Մատրիտի կազմը երկու անգամ յաջողած է տիրանալ ԵՈՒ. ԷՖ. Ա. Ի. բաժակին, իսկ երկու անգամ ալ հասած է Եւրոպայի Բաժակակիրներու Բաժակի աւարտականին (այժմ ջնջուած) եւ պարտուած է: Եւրոպայի «Սուփոր Բափ»ին ան տիրացած է մէկ անգամ եւ երկու անգամ պարտուած է:

Միջազգային գետնի վրայ, Ռէալ Ինթերքոնթինենթալ բաժակին տիրացած է երկու անգամ, իսկ երեք անգամ պարտուած է աւարտականներուն: Այլ խօսքով, իր հիմնադրութենէն ի վեր, Մատրիտի արքայական կազմը տիրացած է 74 տարբեր տիտղոսներու:

Պատկառելի եւ նախանձելի թիւ մը ակումբի մը համար: Բնականաբար, նման մեծ ակումբի մը պատմութեան հարստացման մէջ հիմնական դեր ունեցած են իր մարզիկները: Հարիւրաւորներ կրած են Մատրիտի շապիկը, ըլլան անոնք սպանացի թէ ոչ: Սպանացիներէն կարելի է յիշել Մանուէլ Սանչէզը, Խոսեանիթոն, Մարթին Վազքէսը, Պուլթրակուէնիոն, Միչէլը, Հիերոնի եւ վերջին տարիներու ակումբի անուանի աստղերէն՝ Ռաուլը: Իսկ ոչ սպանացիներէն յիշատակելի են Ռէալի բոլոր ժամանակներու լաւագոյն ֆուլթպոյիստներէն Ալֆրետո Տի Սթեֆանոն, Ֆերենց Փուչչաչը, աւելի ուշ՝ Ուկո Սանչէզը, Զամորանոն, Շոուսթրը, Միքայէլ Լաուտրոփը, Զիտանը, Ռոնալտոն, Ֆիկոն, Քանաւարոն, Ռոպերթո Քարրոսը, Պեքհամը եւ ուրիշներ:

Մինչեւ 2009-2010 տարեշրջան, Ռէալի կազմէն առաւելագոյն թիւով հանդէս եկող մարզիկը Մանուէլ Սանչէզն է (1983-2001), 712 մրցումով, սակայն Ռաուլ արդէն իսկ կատարած է 706 մրցում եւ, բնականաբար, այս տարեշրջանին պիտի հաստատէ նոր մրցանիչ: Իսկ Ռէալի շապիկը ամէնէն շատ կրող բերդապահը եղած է Իքքը Քազիաս (440 մրցում):

Մատրիտի կազմով ամէնէն շատ թիւով կոլեր նշանակող մարզիկը կը հանդիսանայ նոյնինքն Ռաուլ, 316 կոլ: Իսկ 200է աւելի կոլեր նշանակած են Ալֆրետո Տը Սթեֆանոն, Քարրոս Սանթիանան, Ֆերենց Փուչչաչը եւ Ուկո Սանչէզը: Սանչէզի կը պատկանի մէկ տարեշրջանի ընթացքին առաւելագոյն թիւով կոլեր նշանակած ըլլալու մարզիկի տիտղոսը (38): Իսկ Ռոնալտոն նշանակած է Մատրիտի կազմին ամէնէն կանուխ կոլը (15րդ երկվայրկեանին), 2003ին, Աթլետիքո Մատրիտի դէմ մրցումի մը ընթացքին:

24 մարզիչներ շահած են տիտղոսներ: Ամէնէն շատ տիտղոս շահող մարզիչն է Միլիէլ Մոլնոզ (1959 եւ 1960-1974):

Իր հիմնադրութենէն մինչեւ օրս Ռէալ ունեցած է 19 նախագահներ: Ներկայիս անոր նախագահն է Ֆիորէնթինօ Փերէզ:

### ԱՐՔԱՅԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԱՅՍ ՏԱՐԵՇՐՉԱՆԻՆ

Ռէալ Մատրիտ անցեալ տարեշրջանը կը սկսէր մեծ յա-



ւակնութիւններով: Սպանիոյ ախոյեանը կը պահէր իր խումբին մարզիկները: մարզիչ Շոուսթրը ներկայ էր՝ անգամ մը եւս յաջողութիւն բերելու համար: Սակայն, քանի մը շաբաթ ետք արդէն յստակ կը դառնար, որ Ռէալ կը գտնուի լուրջ դժուարութիւններու դիմաց: Անակնկալ պարտութիւններ կամ անբացատրելի հաւասարութիւններ, դժուար կամ «բախտով» յաղթանակներ եւ... տիտղոսը կը սկսէր երազ թուիլ: Կը պաշտօնագրկուէր մարզիչ Շոուսթրը եւ անոր փոխարէն կը նշանակուէր Մանուէլ Փելեկրինի: Կրկին յաղթանակներ կը սկսէին իրարու յաջորդել եւ ախոյեանութեան վճռորոշ մրցումը կը կատարուէր Մատրիտի «Սանթիակո Պէռնայէօ» դաշտին վրայ: Ռէալ ծանր պարտութիւն մը կը կրէր Պարսելոնայէն եւ... կը սկսէր նոր տարեշրջանի նախապատրաստութիւններուն:

1 Յունիս 2009ին, ակումբի նախագահ ընտրուելով, Ֆիորէնթինօ Փերէզ մեծ պիւտձէ կը յատկացնէ նոր մարզիկներու «գնման» համար: Աստղաբաշխական գումարներով «կը գրնւին չորս մարզիկներ՝ փորթուգալցի Ռոնալտո, պրագլիցի Քաքա, ֆրանսացի Պենզիմա եւ սպանացի Խաւի Ալոնզօ: Ճիշդ է որ խումբէն կը հեռանան հոլանտացիներ Շնայտրըրը եւ Հիլնթեյթարը, սակայն անոնց ձգած բացը շուտով կը գոցուի: Վերոնշեալ չորս մարզիկներու միացումով, Մատրիտի կազմը այսօր կը նկատուի գերխումբ մը, որուն դիմադրել բաւական դժուար է: Սպանիոյ մէջ արդէն իսկ կը խօսուի Ռէալ-Պարսա մենամարտի մասին եւ զայն կը համարեն «Աստղերու Պատերազմը»: Ախոյեանութեան տիտղոսը անկասկած բաժին պիտի իյնայ այս երկուքէն մէկուն: Ռէալ մեծ յաւակնութիւններ ունի նաեւ «Չեմփրըզ Լիկ»էն, մանաւանդ որ աւարտական մրցումը պիտի կատարուի իր դաշտին վրայ: Այլ խօսքով, ան պիտի պայքարի բոլոր «ճակատներու» վրայ՝ խլելու համար առաւելագոյն տիտղոսները:

Բայց միշտ ալ պէտք է յիշել, որ ֆուլթպոյը հաւաքական գեղեցիկ խաղ մըն է եւ շատ յաճախ փայլուն ֆուլթպոյիստներով օժտուած խումբեր չեն յաջողի լաւ արդիւնքներ արձանագրել: Ռէալի կը մնայ այս իրականութեան հակառակին սպացոյցը տալ իր միլիոնաւոր համակիրներուն:





# ՎԱՂԱՄԵՌԻԿ ԵՂԲ. ՇԱՀԷ ԿԻՒՎԼԷՔՃԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Թղթակից  
ԺՇՏՅՏ

**Հ**ՄԸՄ-ի ժրտէյտէի մասնաճիւղի վարչութեան հովանաւորութեամբ եւ մասնաճիւղի սկաուտական խորհուրդին եւ խմբապետական կազմին կազմակերպութեամբ, Կիւվլէքճեանի, 20 Դեկտեմբեր 2009ի երեկոյեան ժամը 6ին, Ազգային Լիւան եւ Սոֆիա Յակոբեան Գոլէճի սրահին մէջ տեղի ունեցաւ վաղամեռիկ եղբ. Շահէ Կիւվլէքճեանի յիշատակին նուիրուած հանդիսութիւն մը, ներկայութեամբ ազգային մարմիններու ներկայացուցիչներու, Կիւվլէքճեանի ընտանեկան պարագաներուն, ծնողներու, բարեկամներու եւ սկաուտներու:

Լիբանանի եւ Հայաստանի քայլերգներուն ունկնդրութենէն ետք, հանդիսութեան բացման խօսքը արտասանեց եղբ. Խաթակ Գոճայեան: Ան ըսաւ, որ եղբ. Շահէ Կիւվլէքճեան փոքր տարիքէն անդամակցած է ՀՄԸՄ-ին՝ ըլլալով հնազանդ գալլիկ մը, ապա՝ արի, խմբապետ ու միաւորի խմբապետ: Եղբայրը յայտնեց, որ շուրջ 40 օր առաջ մահացած երիտասարդ ՀՄԸՄ-ականը գիտակից էր իրեն յանձնուած պարտականութիւններուն եւ միշտ առաջնահերթ կը նկատէր իր մեծ ընտանիքը՝ ՀՄԸՄ-ը:

Եղբ. Խաթակ Գոճայեան նշեց, որ վաղամեռիկ եղբայրը ՀՄԸՄ-ի մէջ գործեց ծառայութեան բարձր ոգիով, աշխատասիրութեամբ եւ նուիրումով, ու այս գծով ան իր կարելին ըրաւ բարելաւելու համար շրջանի սկաուտական կեանքը:



Եզրափակելով իր խօսքը, եղբ. Գոճայեան ըսաւ. «ՀՄԸՄ-ի «Բարձրացիր-բարձրացուր» նշանաբանին հետեւող կարգապահ սկաուտը արագօրէն հասաւ բարձրութեան գագաթնակէտին: Այսօր իր եղբայրներն ու քոյրերը բարձր պիտի պահեն իրենց եղբոր թարմ յիշատակը եւ պիտի շարունակեն ՀՄԸՄ-ի առաքելութեան ծառայող երթը»:

Ապա, ՀՄԸՄ-ի ժրտէյտէի մասնաճիւղի գալլիկներն ու արժուիկները, արիներն ու արեւոյշները, երէցներն ու պարմանուհիները եւ խմբապետները ներկայացուցին զեղարուեստական յայտագիր մը, որուն մէջ անոնք երգով, ասմունքով, պարով եւ կենդանի պատկերներով վառ պահեցին եղբ. Կիւվլէքճեանի յիշատակը:

Հանդիսութեան ցուցադրուեցան նաեւ եղբ. Կիւվլէքճեանի ընտանեկան, ընկերային եւ սկաուտական կեանքը ներկայացընող լուսանկարներ:

Հանդիսութեան աւարտին, ՀՄԸՄ-ի ժրտէյտէի մասնաճիւղի սկաուտները միասնաբար երգելով յայտնեցին, որ դժուար է առանց արցունքի հեռանալ իրենց ընկերոջմէն: «Պահպանիչ»էն ետք յայտագիրը փակուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով:





# ՄԱՐԶԱԿԱՆ ՓԱՌԱՀԵՂ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ Հ.Մ.Ը.Մ.Ի ԹՈՐՈՆՆԹՈՅԻ ՄԱՄՆԱԾԻՂԻ 40ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

## Ձարեհ Տեղիչեան ԹՈՐՈՆՆԹՈ

**2**009ին, Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի շրջանի 39րդ մարզախաղերը զուգարկայեցան Թորոնթոյի մասնաճիւղի հիմնադրութեան 40ամեակին:

Արդարեւ, նախաձեռնութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Շրջանային Վարչութեան եւ կազմակերպութեամբ Թորոնթոյի մասնաճիւղի վարչութեան, Հ.Մ.Ը.Մ.ի Թորոնթոյի մեծ ընտանիքը արժանավայել շուքով նչեց մասնաճիւղի հիմնադրութեան 40ամեակը:

Այս առիթով, Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի շրջանի 39րդ մարզախաղերը տեղի ունեցան Թորոնթոյի մէջ, 27-29 Նոյեմբեր 2009ին, նախագահութեամբ պասքեթպոլի համաշխարհային նախկին աստղերէն Արմենակ Այաճաճեանի:

### ՄԱՐԶԱԿԱՆԵՐԸ

Մարզախաղերուն իրենց մասնակցութիւնը բերին Հ.Մ.Ը.Մ.ի



Արեւմտեան Միացեալ Նահանգներու Փաստինայի «Ազատամարտ», Օրէնճ Բառենթիի «Սարգարապատ» եւ Սան Տեռնանտո Հովիտի «Մասիս» մասնաճիւղերը, Արեւելեան Միացեալ Նահանգներէն Փրովիտընսի մասնաճիւղը, իսկ Գանատայէն Քէմպրիճի, Համիլթընի, Մոնթրէլի եւ հիւրընկալ Թորոնթոյի մասնաճիւղերու մարզական խումբերը:

39րդ մարզախաղերը ընդգրկեցին տղոց պասքեթպոլի, ֆլոր հաքիի եւ փինկ-փոնկի տղոց ու աղջկանց, ներքին ֆուտ-

պոլի, ճատրակի եւ ակթիթիզմի մրցումներ:

Երեք օրերու ընթացքին, մօտ 400 մարզիկ-մարզիկուհիներ իրենց մասնակցութիւնը բերին աւանդական դարձած այս մարզախաղերուն, մրցեցան իրարու հետ եղբայրական ջերմ մթնոլորտի մէջ, Հ.Մ.Ը.Մ.ական ոգիով, տիրանալու համար մրցանակներու, յաղթանակի մետալներու եւ բաժակներու:

Մեծ էր խանդավառութիւնը եւ ոգևորիչ: Յատկանշական էր մանաւանդ հայ երիտասարդութեան խումբերում ներկայութիւնը մրցումներուն, իրենց խանդավառ քաջալերանքով: Անոնք եկած էին քաջալերելու ո՛չ միայն մասնակցող մարզիկները, կրտսերներէն







մինչև վեթերաններ, այլև՝ Հ.Մ.Ը.Մ-ը, որ մարզական այս խաղերու ճամբով իրարու կը շողկապէ Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքի տարբեր քաղաքներէ եւ երկիրներէ համախմբուած անդամ-անդամուհիները:

**40ԱՄԵԱԿԻ ՊԱՐԱՀԱՆԴԻՍԸ**

Մարզախաղերուն առընթեր, Շաբաթ, 28 Նոյեմբերի երեկոյեան, Հ.Մ.Ը.Մ-ի Թորոնթոյի մասնաճիւղը իր հիմնադրութեան 40ամեակին առիթով կազմակերպեց պարահանդէս մը՝ Հայ Կեդրոնի սրահին մէջ, ուր աւելի քան 600 Հ.Մ.Ը.Մ-ականներ եւ համակիրներ, մարզիկներուն հետ միասնաբար, վայելեցին հաճելի երեկոյ մը: Երեկոն խանդավառեցին թորոնթոյեցի երգիչ Յարութ Զէնեան եւ «Փիւնիկ» նուագախումբը:

Խօսքեր արտասանեցին Հ.Մ.Ը.Մ-ի Գանատայի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Մոսիկ Թոփուզեան եւ Հ.Մ.Ը.Մ-ի Թորոնթոյի մասնաճիւղի ատենապետուհի քոյր Հելէն Նաճարեան, որ այս առիթով վարչութեան անունով յատուկ զնահատագիրներով պատուեց մասնաճիւղի երկար տարիներու երէց խումբի Ֆուլթոնի մարզիչ եղբ. Սուրէն Պապոշեանը եւ քոյր Իզապէլ Քէշիշեանը՝ 100 մեթր վազքի իր բացառիկ յաջողութեան համար:

Հոս եւս զգալի էր երիտասարդներու խուռներամ մասնակցութիւնը, ինչ որ հոգեկան զոհուակութիւնն եւ մեծ հրճուանք կ'առթէ քիչ մը աւելի տարէց սերունդին եւ կազմակերպող միութեան համար:

**ՓԱԿՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ**

Կիրակի, 29 Նոյեմբերի առաւօտեան տեղի ունեցան աւարտական մրցումները, Հ.Մ.Ը.Մ-ի սեփական մարզադահլիճին մէջ: Փակման հանդիսութենէն առաջ տեղի ունեցաւ երէց տղոց պասքեթպոլի աւարտական մրցումը, որ իրարու դէմ հանեց Փասատինայի «Ազատամարտ» եւ Սան Ֆրանսիսկո Հոփտի «Մասիս» մասնաճիւղերու խումբերը, հո՞՞ք բազմութեան մը ներկայութեան: Խաղը ընթացաւ շատ հետաքրքրական: Երկուստէք խումբերը կիրարկեցին բարձրորակ, ներդաշնակ, արագ եւ պաշտպա-



Մարզախաղերու նախագահ Արմենակ Ալաճաճեան, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Արմէն Կետիկեանի եւ Գանատայի Շրջանային Վարչութեան անդամներու հետ:



նողական խաղ մը, գեղեցիկ փոխանցումներով եւ կողովներու տարափով, ինչ որ մեծ զոհացում պատճառեց ներկաներուն եւ արժանանացաւ խելայեղ ծափերու: Յաղթանակի բաժակին տիրացաւ Փասատինայի «Ազատամարտ» մասնաճիւղի խումբը, 101-72 արդիւնքով:

Խաղերու աւարտին, Հ.Մ.Ը.Մ-ի մարզադահլիճի մոտեք գործեց պատուոյ շքախումբը, գլխաւորութեամբ 39րդ մարզախաղերու նախագահ Արմենակ Ալաճաճեանի, Ս. Աստուածածին եկեղեցւոյ

հովիւ՝ Մեղրիկ Ծ. Վրդ. Բարիքեանի, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Արմէն Կետիկեանի, Հ.Յ.Դ. Գանատայի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Բաֆֆի Պէքմէզեանի, Հ.Մ.Ը.Մ-ի Գանատայի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Մոսիկ Թոփուզեանի, Հ.Մ.Ը.Մ-ի Արեւելեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Վարդան Աղամեանի, Հ.Յ.Դ. «Ս. Թեհլիրեան» Կոմիտէի հերթապահ Վաչէ Գլըպոզեանի, Հ.Մ.Ը.Մ-ի «Արժանեաց» շքանշա-





Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական  
Վարչութեան անդամ  
եղբ. Արմէն Կետիկեան:

նակիրներ եղբայրներ Մանուէլ Հալլաճեանի եւ Երուանդ Շահինեանի, ազգային երեսփոխաններ՝ Օսիկ Միսիսի Արթինեանի եւ Յարութ Գասապեանի, Հ.Մ.-Ը.Մ.ի Թորոնթոյի մասնաճիւղի ատենապետուհի քոյր Հելէն Նաճարեանի եւ մասնաճիւղի նախկին ատենապետներու, Շրջանային Վարչութեան անդամներու, Համազգայինի «Գլաճոր» եւ Հ.Օ.Մ.ի «Ռուբինա» մասնաճիւղերու եւ Հայ Կեդրոնի Երէջներու Ընկերակցութեան ներկայացուցիչներու:

Փակման հանդիսութիւնը սկսաւ աւանդական տողանցքով, առաջնորդութեամբ Հ.Մ.-Ը.Մ.ի Թորոնթոյի մասնաճիւղի սկաուտական շեփորախումբին, մասնակցութեամբ մասնաճիւղի սկաուտական կազմերուն, մարտարևատի խումբին եւ խաղերուն մասնակից խումբերու մարզիկ-մարզիկուհիներուն, հանդիսավարութեամբ քոյր Յոլինէ Քէշիշեանի:

Գանատայի, Միացեալ Նահանգներու եւ Հայաստանի քայլերգներէն ետք ելոյթ ունեցան Հ.Մ.-Ը.Մ.ի Թորոնթոյի մասնաճիւղի մարտարուեստի մարզիկները, իսկ սկաուտները կազմեցին բուրգեր:

Յորելեար մասնաճիւղի ատենապետուհի քոյր Հելէն Նաճարեան բարի գալուստի եւ շնորհակալական իր խօսքէն ետք անդրադարձաւ մասնաճիւղի 40ամեակին: Ապա, քոյր Յոլինէ Քէշիշեան յաջորդաբար հրաւիրեց Հ.Մ.-Ը.Մ.ի Գանատայի Շրջանային Վարչու-







Թեան ատենապետ եղբ. Մոսիկ Թոփուզեանը, որ յատուկ յուշանուէրով մը պատուեց Արմենակ Ալաճաճեանը, Հ.Յ.Դ. Գանատայի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ՝ Բաֆֆի Պէքմէզեանը, Հ.Յ.Դ. «Ս. Թեհլիրեան» Կոմիտէի հերթապահ Վաչէ Գլըպոզեանը եւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Արմէն Կէտիկեանը, որոնք արտայայտուեցան շնորհաւորանքի,

քաջալերանքի, գնահատանքի եւ շնորհակալութեան խօսքերով, ի մասնաւորի յորելեար մասնաճիւղի ՃՕամեայ հայանուէր աշխատանքին, հայակերտման եւ հայապահպանման նուիրական ճամբուն վրայ, որուն շարքերէն անցած են հայութեամբ թրծուած հարիւրաւոր երիտասարդներ եւ պարմանուհիներ, որոնցմէ շատերը այսօր դարձած են գործօն անդամներ գաղութէն ներս:

Մէջընդմէջ եղան վարչութիւններու միջեւ յուշանուէրներու փոխանակում, իսկ յաղթական մարզիկներուն եւ խումբերուն՝ մետալներու եւ բաժակներու յանձնում:

Հանդիսութիւնը վերջ գտաւ Մեդրիկ Մ. Վրդ. Բարիքեանի «Պահպանիչ» ուլ եւ «Յառաջ նահատակ» քայլերգով, կատարողութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի սկառուտական շեփորախումբին եւ մասնակցութեամբ բոլոր ներկաներուն:

Յատուկ գնահատանքի արժանի են Հ.Մ.Ը.Մ.ի սկառուտական շեփորախումբի անդամները, որոնք հակառակ իրենց պատանի տարիքին, յանդիման լինելով մարզասրահը, ներկայ հանդիսականներէն շատերուն մօտ արթնցնելով անցեալի հին, անվերադարձ յիշատակներ:

Մեծապէս գնահատանքի արժանի է նաեւ կազմակերպիչ յանձնախումբը, որ բծախնդրօրէն կազմակերպեց եւ լաւագոյնս կատարեց իրեն վստահուած պարտականութիւնը:

*'Made from one single slice of natural Australian opal'*

# Classique<sup>®</sup>

## OPAL DIAL WATCH

*Sarkis Der Bedrossian*

*Sams Watchmaker Jeweller Pty. Ltd.  
123 Clarence Street  
Sydney 2000  
Australia*

Phone: +61 2 9290 2199  
fax: +61 2 9262 1630  
Website: [www.classiquewatches.com](http://www.classiquewatches.com)  
Email: [Info@classiquewatches.com](mailto:Info@classiquewatches.com)



# ՄԱՐԶԱՆԱԴԵՐՈՒ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ

## ՃԱՏՐԱԿ

### Կրտսեր

1. Անթոնի Արապեան (Թորոնթո)
2. Սարգիս Գըլըպոզեան (Թորոնթո)
3. Ատոմ Թաշճեան (Թորոնթո)

### Փոքր

1. Րաֆֆի Գըլըպոզեան (Թորոնթո)
2. Նուպար Նախնիքեան (Թորոնթո)
3. Յովիկ Գաֆէսեան (Թորոնթո)

### Ծիլ

1. Ժողէֆ Սուբատտամ (Թորոնթո)
  2. Ռազմիկ Քէպապճեան (Թորոնթո)
- Շահան Թերզեան (Թորոնթո)  
Սասուն Սարկարոսեան (Թորոնթո)

## ԱԹԼԵԹԻԶՄ

### 60 Մեթր Վազք/Տղաք

#### Երէց

1. Րաֆֆի Վարդանեան (Փասատինա «Ազատամարտ»)
2. Արմէն Պալէոզեան (Թորոնթո)
3. Արմէն ճամճիկեան (Թորոնթո)

### Կրտսեր

1. Արմէն Շիրինեան (Թորոնթո)
2. Շանթ Սարգիսեան (Թորոնթո)
3. Պարէթ Զուլֆուկադու (Թորոնթո)

### Փոքր

1. Գօգօ Քէչիշեան (Թորոնթո)

### 60 Մեթր Վազք/Աղջիկներ

#### Կրտսեր

1. Իզապելլա Քէչիշեան (Թորոնթո)
2. Ռաֆայելլա Քէչիշեան (Թորոնթո)

### 200 Մեթր Վազք/Տղաք

#### Երէց

1. Րաֆֆի Վարդանեան (Փասատինա «Ազատամարտ» )
2. Արմէն Պալէոզեան (Թորոնթո)
3. Արմէն ճամճիկեան (Թորոնթո)

### Կրտսեր

1. Արմէն Շիրինեան (Թորոնթո)
2. Շանթ Սարգիսեան (Թորոնթո)
3. Տէրիք Ալլահեարեան (Թորոնթո)

### 200 Մեթր Վազք/Աղջիկներ

#### Կրտսեր

1. Իզապելլա Քէչիշեան (Թորոնթո)
2. Ռաֆայելլա Քէչիշեան (Թորոնթո)

### 600 Մեթր Վազք/Տղաք

#### Կրտսեր

1. Պարէթ Զուլֆուկադու (Թորոնթո)
2. Արա Խանամիրեան (Թորոնթո)

### 1000 Մեթր Վազք/Տղաք

#### Կրտսեր

1. Շանթ Սարգիսեան (Թորոնթո)
2. Արմէն Շիրինեան (Թորոնթո)

Խմբային ախոյեան՝ Թորոնթո

## ՓԻՆԿ ՓՈՆԿ

### Խմբային

1. Թորոնթո (Վազրիկ Շարապխանեան, Արմէն Գալուստեան, Ալէք Սաթճեան, Վրէժ Եփրեմեան)
2. Մոնթրէալ (Կարպիս Կարապետեան, Վահէ Թաշճեան, Հայկ Խոպասարեան)

## ՅՆՈՐ ՀԱՔԻ

### Երէց Տղաք

1. Մոնթրէալ
2. Թորոնթո

### Կրտսեր Տղաք

1. Թորոնթո
2. Մոնթրէալ

## ՊԱՍՔԵԹՊՈԼ

### Երէց Տղաք

1. Փասատինա («Ազատամարտ»)

2. Սան Ֆեռնանտօ Վալի («Մասիս»)

### Կրտսեր Տղաք

1. Թորոնթո
2. Մոնթրէալ

### Փոքր Տղաք

1. Մոնթրէալ
2. Թորոնթո

## ՅՈՒԹՊՈԼ

### Երէց Տղաք

1. Թորոնթո
2. Մոնթրէալ

### Կրտսեր Տղաք

1. Թորոնթո
2. Մոնթրէալ

### Փոքր Տղաք


1. Թորոնթո
2. Մոնթրէալ

### Երէց Աղջիկներ

1. Մոնթրէալ
2. Թորոնթո

### Փոքր Աղջիկներ

1. Թորոնթո
2. Մոնթրէալ




Ծանօթ.- Երէց՝ 18 տարեկանէն վեր,  
կրտսեր՝ 17-18 տարեկան, փոքր՝ 14-16  
տարեկան, ծիլ՝ 13 տարեկան եւ վար:









նային Վարչութեան ներկայացուցիչ Սարգիս Մինասեան, Հ.Ե.Դ. Փրովիտորնսի մասնաճիւղի ատենապետ եղբ. Սարգիս Եփրեմեան եւ այլն:

Մարգարադերուն առնթեր, Ռոստ Ալլրնտի Քոնվէնչըն կեդրոնին շքեղ սրահին մէջ տեղի ունեցաւ յաղթանակի ճաշկերոյթ-պարահանդէսը, հովանաւորութեամբ Արեւելեան Միացեալ Նահանգներու Թեմի Առաջնորդ Օշական Արք. Չոլոյեանի, ներկայութեամբ բազմաթիւ հրաւիրեալներու եւ աւելի քան եօթը հարիւր հայորդիներու:

Պարահանդէսին պաշտօնական բաժինով, օրուան հանդիսաւար քոյր Մակի Նալպանտեան բացաւ երեկոն՝ բարի գալուստ մաղթելով ներկաներուն, մանաւանդ հայ երիտասարդութեան, որուն նուիրուած է 2009 տարին, Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսի «Հայ Երիտասարդութեան Տարուան» հռչակումով:

Ապա, ան հրաւիրեց Հ.Մ.Ը.Մ.-ի Փրովիտորնսի մասնաճիւղի ատենապետ եղբ. Սարգիս Եփրեմեանը, որ հակիրճ խօսքով շնորհակալութիւն յայտնեց կազմակերպիչ յանձնախումբերուն, որոնց տքնաջան աշխատանքին շնորհիւ մարգարադերը ընթացան մեծ յաջողութեամբ:

Յաջորդ խօսքը արտասանողը եղաւ Հ.Մ.Ը.Մ.-ի Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան ատենապետ Եղբ. Հրաչ Մեսրոպեան, որ ըսաւ. «Աւելի քան 90 տարիներ առաջ, խումբ մը գաղափարապաշտ, հաւատաւոր ու հեռատես հայորդիներու յղացումով

ծնունդ առաւ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը, որուն վեմ նպատակը եղաւ ոչ միայն ֆիզիքական, այլ նաեւ բարոյական ու ազգային կրթութիւն ջամբել հայ պատանիին ու երիտասարդին, բարձրացնել անոնց հոգեմտաւոր պատրաստութիւնը եւ զանոնք զինել այն գիտակցութեամբ, որ իրենք եւս, իրենց կարգին, կարենան բարձրացնել իրենց շրջապատը: Գաղափարապաշտ հիմնադիրները հայ պատանին ու երիտասարդը ներգրաւելով այս հզօր կազմակերպութեան մէջ ուզեցին առաջը առնել ջարդէն ճողոպրած ու հայրենի օրրանէն տեղահան եղած հայ զանգուածի ձուլումին»:

Շարունակելով, եղբ. Մեսրոպեան հաստատեց. «Եթէ կ'ընդունինք, որ երիտասարդութիւնն է ազգի մը ապագան, ապա կրնանք ըսել թէ հայեցի արժէքներով զինուած գիտակից երիտասարդութիւնը երաշխիքն է մեր ազգի գոյատեւման ու հայրենիքի բարգաւաճման: Ուրեմն, անհրաժեշտ է լայնօրէն բանալ մեր սրտերը Հ.Մ.Ը.Մ.-ի նուիրական առաքելութեան առջեւ, համախմբուել անոր շուրջ, մեր բարոյական ու նիւթական աջակցութեամբ սատարել անոր, մեր մասնակցութեամբ ու ներկայութեամբ մղիչ ուժ դառնալ, որպէսզի այս հզօր կազմակերպութիւնը շարունակէ սերունդներ դաստիարակելու իր նուիրական երթը, որպէսզի երաշխաւորուած տեսնենք Հ.Մ.Ը.Մ.-ի նպատակներուն ու իղձերուն իրականացումը՝ ի խնդիր հայ ազգին ու Միացեալ Հայաստանին»:

Հ.Մ.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչու-

թեան ներկայացուցիչ Եղբ. Վահրամ Դանիէլեան իր պատգամին մէջ յայտնեց, որ դարձեալ եւ միշտ պատնէշի վրայ է Հ.Մ.Ը.Մ.-ը: Ի վերջոյ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը՝ Հ.Մ.Ը.Մ.-ն է, որ իր հիմնադրութենէն ի վեր յամառօրէն կը պայքարի կերտելու համար տիպար ու մաքրամաքուր մարդը, հայը, մարդիկն ու սկսուտը: Ան շարունակեց իր խօսքը նշելով, թէ սրբնթաց թափով յեղաշրջուող նոր ժամանակներուն հետ ընթանալով, Հ.Մ.Ը.Մ.-ականէն կը պահանջուի յաւելեալ գոհողութիւն եւ նուիրում: «Բնականաբար անփոփոխ պիտի մնայ յանձնառութեան ուժը: Կառչած իր «Բարձրացիր բարձրացուր» նշանաբանին, Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը պիտի շարունակէ սերունդներ պատրաստել եւ դաստիարակել, այդ ալ շնորհիւ ժողովուրդին՝ համակիրներուն տաժած գուրգուրանքին եւ հետեւողական ու աննահանջ քաջալերանքին», ըսաւ եղբ. Դանիէլեան:

Վերջին խօսքը արտասանողը եղաւ Արեւելեան Մ. Նահանգներու Առաջնորդ Օշական Արք. Չոլոյեան: Ան իր խրախուսիչ պատգամով գովքը հիւսեց 91 տարեկան երիտասարդ Հ.Մ.Ը.Մ.-ին, շեշտելով, որ ան հայ երիտասարդին կու տայ հայու ինքնութիւն, հաւատարմութիւն մեր ազգային արժէքներուն, ու փոքր տարիքէն անոր կը սորվեցնէ կարգ ու կանոն, յարգանք օրէնքի նկատմամբ: Սրբազան հայրը աւելցուց, որ մեր պարտականութիւնն է յաջորդ տասնամեակներուն պայքարիլ անտար-





բերութեան դէմ, տէր կանգնիլ մեր ազգային ամբողջական իրաւունքներուն, օֆանդակել Հ.Մ.Ը.Մ.ին ամէն ձեւով, մանաւանդ պահելով մեր զաւակները անոր խորխոր շարքերուն մէջ, որպէսզի անոնք դառնան արժանաւոր պաշտպանները մեր կրօնքին, մշակոյթին ու հայրենիքին:

Յայտագրի պաշտօնական բաժինի աւարտին, ներկաները Քայլիֆորնիայէն ժամանած երգիչ Սագոյի, իր նուազախումբի եւ ձայնի հաղորդավար Յարութի Տոխ երգերով ու պարերով խանդավառ պահեր սպրեցան մինչեւ առաւօտեան կանուխ ժամեր:

**ՓԱԿՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ**

Մարզախաղերու աւարտին, «Հոփ Հայ Սքուլ»ի մարզադաշտին վրայ տեղի ունեցաւ միջ-մասնաճիւղային 19րդ մարզախաղերուն փակման շքեղ հանդիսութիւնը, հովանաւորութեամբ Արեւելեան Մ. Նահանգներու Թեմի Առաջնորդ Օշական Արք. Չորոյեանի եւ ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի բազմահարիւր համակիրներու: Իսկական վայելք մըն էր ականատես ըլլալ եօթը հարիւրէ աւելի մարզիկներու, սկաուտներու, արենոյշներու, գայլիկներու եւ կակուղ թաթիկներու տողանցքին, հսկողութեամբ Շրջանային Սկաուտական Խորհուրդին: Տողանցքը կ'առաջնորդուէր Փրովիտորնսի սկաուտներու նորակազմ շեփորախումբին կողմէ:

Փակման հանդիսութեան հանդիսավարն էր եղբ. Արա Նարպանտեան, որ տողթ. Նատին Աբրահամեան-Լոմ-

պարտիի հետ փոխն ի փոխ արտասանած հայաշունչ խօսքերով ներկայացուց հպարտ ու բարձրաճակատ տողանցող ապագայ սերունդը: Տողանցողները կը հետեւէին ծածանող հայկական դրօշին, զինանշանին ու Փրովիտորնսի մասնաճիւղին պատրաստած Հ.Մ.Ը.Մ.ի շուշանածաղիկ յուշատախտակին, «Բարձրացի՛ր-բարձրացու՛ր» նշանաբանով թեւաւորուած: Սկաուտներու շարքին կը հետեւէր հայկական տարազով զարդարուն, մարզիկներու մետայները ձեռքին՝ Լենա Մինասեան: Տողանցքին սկիզբը ծափահարութիւններով գնահատուեցաւ Փրովիտորնսի գաղութին ծանօթ տիկ. Տէպի Բժոժեանը, որ տպաւորիչ ձեւով երգեց ամերիկեան, հայկական, գանատական եւ Հ.Մ.Ը.Մ.ի քայլերգները:

Եղբ. Արա Նարպանտեան տեղեկութիւններ տուաւ իւրաքանչիւր մասնաճիւղի մասին, մինչ նոյն մասնաճիւղի անդամները հպարտօրէն տողանցեցին պատուոյ հարթակին առջեւէն: Տողանցողներու վերջին խումբը ներկայացուցին Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Մ. Նահանգներու Ֆուլթոնի, պարթեթալոյի եւ լողի հաւաքական խումբերը:

Ապա, օրուան հանդիսավարը ներկայացուց պատուոյ հիւրերը՝ Օշական Արք. Չորոյեան, Կոմիտաս Քհնյ. Պաղասարեան Սրբոց Վարդանանց եկեղեցւոյ հոգեւոր հովիւ, Պատուելի Յակոբ Մանճեղեան, օրուան «Թագաւոր»՝ Արամ Կարապետեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վահրամ Դանիէլեան Հ.Յ.Դ. Կեդրոնական

Կոմիտէի ներկայացուցիչ Ժանօ Աւետիսեան, Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Հրաչ Մեսրոպեան, Հ.Օ.Մ.ի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ Քնար Քիլէճեան, Համագգայինի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ Սարգիս Մինասեան, Հ.Ե.Դ. Փրովիտորնսի մասնաճիւղի ատենապետ եղբ. Սարգիս Եփրեմեան եւ Սրբոց Վարդանանց եկեղեցւոյ ներկայացուցիչներ: Պատուոյ հիւրերու շարքին էր նաեւ Ռոտ Այլընտ նահանգի ընդհանուր գանձապահ Ֆրէնք Գափրիօ:

Խօսք տրուեցաւ Հ.Ե.Դ. Փրովիտորնսի մասնաճիւղի ատենապետ եղբ. Սարգիս Եփրեմեանին, որ շնորհակալութիւն յայտնեց մարզախաղերուն նպատած բոլոր յանձնախումբերու անդամներուն, որոնց համագործակցութեամբ մարզական այս մեծ ձեռնարկը իրագործուեցաւ: Ապա խօսքեր արտասանեցին Հրաչ Մեսրոպեան եւ Ժանօ Աւետիսեան, որոնք յաջորդաբար փոխանցեցին Շրջանային Վարչութեան եւ Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէին խօսքերը: Անոնք իրենց շնորհակալութիւնները յայտնեցին մարզիկներուն ու պատասխանատուներուն, որոնք փայլուն էջ մը արձանագրեցին միութեան պատմութեան մէջ Հ.Մ.Ը.Մ.ականի վայել իրենց կեցուածներքով: Եղբ. Մեսրոպեան յատկապէս շնորհակալութիւն յայտնեց պատասխանատու մարմիններուն, որոնք ընդառաջելով Շրջանային անցեալ տարուան կոչին՝ այս տարի բազմապատկեցին իրենց շարքերը,



մաղթելով որ անոնք ձգտին աւելի-ին, հասնելով ամէն հայ պատանիի ու երիտասարդի՝ անոնց մէջ սերմանելով ազգի ու հայրենիքի ծառայութեան գաղափարը:

Յայտագրի կիսուն, մարգարազներու կազմակերպիչ Փրովիտորնսի մասնաճիւղը գործադրեց գեղարուեստական բաժին մը, ներկայացնելով հայոց պատմութեան մէջ կարեւոր անդրադարձներ հայկական մարգարազներու մասին, հին Նաւասարդեան եւ յունական ողիմպիական խաղերու օրերէն մինչեւ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութիւնն ու անոր կազմակերպած



մարգարազերը: Տոբթ՝ Նատին Աբրահամեան-Լոմպարտի պատշաճ եղանակի ընկերակցութեամբ ներկայացուց պատմական, որուն հետ միաժամանակ ցուցադրուեցան հսկայ պատկերները դափնեկիր հերոս-մարզիկին, Յունաստանի 286րդ ողիմպիական մրցումներու ըմբշամարտի ախոյեան, Արշակունեաց տոհմի Տրդատ Գ. Թագաւորին, 291րդ ողիմպիական խաղերու կուփամարտի ախոյեան Վարազդատ Թագաւորին, 1911ին անմահ Շաւարշ Քրիսեանի կողմէ հիմնուած «Մարմնամարզ» ամսաթերթին ու վերջապէս Հ.Մ.Ը.Մ.ի երեք հիմնադիրներուն՝ Շաւարշ Քրիսեանի, Գրիգոր Յակոբեանի եւ Յովհաննէս Հինգլեանի: Օրուան ասմունքողը ներկաները ոգեւորեց «Պատիւ ու փառք քեզ Հ.Մ.Ը.Մ.» քերթուածի տպաւորիչ մեկնաբանութեամբ:

Գեղարուեստական յայտագրի աւարտին, խօսք տրուեցաւ օրուան «Թագաւոր»՝ Ռոտ Այլընտ նահանգի նախկին ծերակուտական ու Փրովիտորնսի գաղութին հանրածանօթ ազգային Արամ Կարապետեանին, որ նահանգի դպրոցներուն մէջ Հայկական Ցեղասպանութեան ուսուցման բանաձեւը վաւերացնել տուաւ ու պաշտօնապէս օրէնք դարձուց նահանգի կրթական նախարարութեան մօտ: Կարապետեան, որ միշտ նեցուկ կանգնած է հայ երիտասարդական կազմակերպութիւններուն, իր խօսքը ուղղելով դաշտին վրայ եղող մարզիկներուն ու սկսողներուն, շնորհակալական ու քաջալերական խօսքերը ուղղեց անոնց, շեշտելով որ երի-

տասարդ սերունդն է որ իր յարատեւութեամբ ու վճռակամութեամբ պիտի յղթահարէ բոլոր դժուարութիւնները այս օտար ափերուն վրայ:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վահրամ Գանիէլեան, իր կարգին, շնորհակալեց բոլոր մասնաճիւղերու պատասխանատուները, կարգադիր յանձնախումբերն ու մարզիկները:

Վերջին խօսք աւնոցը եղաւ Սրբազան Հայրը, որ իր Հայրական պատգամով օրուան խանդավառութիւնը հասցուց գագաթնակէտին: Ան իր դէմքը դարձնելով երիտասարդ մարզիկներուն, որոնք Ամերիկայի եւ Գանատայի ափերուն ծնած, Հ.Մ.Ը.Մ.ի շուքին ներքեւ կը մեծնան, վստահեցուց, թէ

անոնք կը պատկանին հայ ցեղին ու հայ եկեղեցիին, թէ անոնք ունին Հայաստանը իբրեւ հայրենիք ու հայրենիք իբրեւ մայրենի լեզու: «Ձեր ինքնութիւնը ծնողներէն տրուած շնորհ մը չէ միայն, - բաւան-, այլ՝ պարտաւորութիւն մը ձեր անձը, ձեր եղբայրն ու քոյրը յարգելու, ձեր եկեղեցին, լեզուն, մայր հայրենիքն ու ձեր ծննդավայրը սիրելու, ու արժեւորելու դուք ձեզ»: Օշական Արք. իր շնորհակալական եւ շնորհակալական խօսքերը եզրակացուց դարձեալ իր խօսքը ուղղելով հայ երիտասարդութեան. «Արարատը ձեզ կը սպասէ, քալեցէ՛ք դէպի յղթանակ, դուք էք մեր գրկուած հողին տէրը, քալեցէ՛ք միշտ առաջ»:

Փակման հանդիսութեան աւարտին տեղի ունեցաւ բաժակներու եւ յուշատախտակներու բաշխում մարգարազներու մասնակից մասնաճիւղերուն, Շրջանային Մարգարական Յանձնախումբի ներկայացուցիչ եղբ. Յակոբ Սուլաքեանի կողմէ: «Տիգրան Ա. Քհնյ. Ույեան» ի շրջուն բաժակը շնորհուեցաւ Պոսթրնի մասնաճիւղին, որ առաջինը հանդիսացաւ բոլոր մարգարազներուն մէջ, առաւելագոյն թիւով կէտեր հաւաքած ըլլալուն համար: «Յովհաննէս Սթամպուլեան» ի շրջուն բաժակին արժանացաւ Ֆլորիտայի մասնաճիւղը, ամէնէն տիպար եւ լաւ կազմակերպուած մասնաճիւղը ըլլալուն համար: Այնուհետեւ, օրուան հանդիսավար եղբ. Արա Նալպանտեան շնորհակալական խօսքերէ ետք յայտարարեց, թէ Յուլիս 2010ին Արեւելեան շրջանի միջ-մասնաճիւղային 20րդ մարգարազերը տեղի պիտի ունենան Նիւ Ճրրօի նահանգին մէջ, իսկ համա-Հ.Մ.Ը.Մ.ական սկսողական 9րդ ընդհանուր բանակումը 2010ին, Հայաստանի մէջ: Սրբազան Հօր աղօթքէն ետք, սկսողները հպարտօրէն տողանցեցին դաշտէն դուրս արտացոլելով մոռութի տողանցքի ատեն արտասանուած Ք. Ժպտունիի քերթուածին հետեւեալ տողերը.-

«Դեմքիդ ժպիտաչքիդ հուր Բարձրացի՛ր- բարձրացուր, Քաջարի հոգիդ ցոյց տուր Բարձրացի՛ր, բարձրացուր»:

ՄԱՐԶԱՍԱՂԵՐՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՍԱԻՐՈՒՄԸ	
	Կէտ
1. Պոսթրն	75
2. Փրովիտընս	33
3. Նիւ Ճրրօի	28
4. Թորոնթօ	19
5. Շիքակօ	18
6. Տիթոնթ	17
7. Ֆիլադելֆիա	15
8. Նիւ Եորք	12
9. Ֆլորիտա	8
10. Ուաշինկթըն	-





# Հ.Ա.Ը.Մ.Ի ԱՐԵՒԵԼԵԱՆ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ 34ՐԴ ԺՈՂՈՎԸ

## Թղթակից ՈՒՈԹԸՐԹԱՈՒՆ

**9**-11 Հոկտեմբեր 2009, Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Միացեալ Նահանգներու շրջանը գումարեց Շրջանային Ներկայացուցչական իր 34րդ ժողովը, Ճյուրիտայի «Օչըն Աքայ Ռիզորթ» պանդոկին մէջ, ներկայութեամբ Ուաշինկթընի, Պոսթընի, Փրովիտընսի, Ֆիլադելֆիայի, Այպընի, Նիւ Ճըրզիի, Շիքագոյի, եւ Ճյուրիտայի մասնաճիւղերու ներկայացուցիչներու, Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան յիսուսը ներկայացուցիչին եւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վահրամ Դանիէլեանի, ընդհանուր՝ 41 անդամներ: Խորհրդակցական ձայնով ներկայերու շարքին ներկայ էին Հ.Յ.Գ. Արեւելեան Մ. Նահանգներու Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչը, Հ.Օ.Մ.ի Արեւելեան շրջանի ատենապետուհին, Համազգայինի Արեւելեան շրջանի ներկայացուցիչը եւ Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան շրջանի վարչութեան անդամներ, Շրջանային Սկստակական Յանձնախումբի ներկայացուցիչը եւ Շրջանային Մարզական Յանձնախումբի ներկայացուցիչը:

Ժողովին բացումը կատարեց ընթացաւարտ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Հրաչ Մեսրոպեան, որուն բարի գալուստի խօսքէն ետք, ներկայացուցիչները վարկեան մը յտորնկայ լուծութեամբ յարգեցին յիշատակը Շրջանային Վարչութեան նոր մահացած անդամ եղբ. Արա Մարկոսեանին:

Ապա, եղբ. Մեսրոպեան խնդրեց որ

ժողովը ընտրէ իր ղեկանը: Ժողովի մնացուն ղեկանի անդամներ ընտրուեցան եղբայրներ Արա Պարսումեան, Յովիկ Արգարեան (ատենապետներ), Սարգիս Եփրեմեան եւ քոյր Դալար Քէշիշեան (ատենադպիրներ):

Ներկայացուցչական ժողովի օրակարգին անցնելէ առաջ, յաջորդաբար խօսքեր արտասանեցին Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Հրաչ Մեսրոպեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վահրամ Դանիէլեան, Հ.Յ.Գ. Արեւելեան շրջանի Կեդրոնական Կոմիտէի անդամ Ժան Աւետիսեան, Հ.Օ.Մ.ի Արեւելեան շրջանի Շրջանային Վարչութեան ատենապետուհի Սիլվա Գուլումեան եւ Համազգայինի ներկայացուցիչ Պետո Տէր Պետրոսեան: Անոնք ժողովին փոխանցեցին յաջորդութեան իրենց բարեմաղթութիւնները, որպէսզի ան յանգի այնպիսի ծրագիրներու եւ առաջադրանքներու, որոնք աւելի պիտի ուսուցանեն Հ.Մ.Ը.Մ.ի լայնածաւալ աշխատանքը:

Այնուհետեւ, ժողովը սկսաւ իր աշխատանքներուն եւ նախ ունկնդրեց ներկայ ութ մասնաճիւղերու միամեայ նիւթաբարոյական տեղեկագիրները եւ ապա՝ Շրջանային Վարչութեան երկամեայ գործունէութեան նիւթաբարոյական տեղեկագիրը:

Համաձայն տեղեկագիրներուն շրջանը ունեցած է բեղուն գործունէութիւն: Այսօր ան՝

- Կը հաշուէ 1150է աւելի անդամ-անդամուհիներ, որոնց 469ը՝ գայլիկ-արծիկ, արի-արեւոյշ, երէց-պարմանուհի, իսկ 600է աւելի մարդիկ-մարդիկուհիներ:

Անցնող տարեշրջանին շրջանը ունե-

ցած է հետեւեալ գործունէութիւնը.-

24-29 Օգոստոս, 2008- Համա-Հ.Մ.Ը.Մ.ական խմբապետական Ե. Համագումարի մասնակցութիւն, Հայաստան:

20-24 Օգոստոս, 2008- Շրջանային սկստակական բանակում, Փրովիտընս:

27 Սեպտեմբեր, 2008- Վկայեալ կարգի սեմինար, Նիւ Ճըրզի:

27 Սեպտեմբեր 2008- Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեակի շքեղ հանդիսութիւն:

4-7 Սեպտեմբեր, 2009- Խմբապետական շրջանային Համագումար, Վկայեալ կարգի սեմինար, Քայլիֆորնիա:

4-5 Հոկտեմբեր, 2009- Գայլիկ-արծիկ ղեկավարներու սեմինար, Ճյուրիտա, Պոսթըն, Ուաշինկթըն:

31 Յունուար-Փետրուար 2009- Ա. կարգի սեմինար՝ Ֆիլադելֆիա, Նիւ Ճըրզի:

Փետրուար 2009- Հիւսիսային Ամերիկայի երեք շրջաններու հանդիպում, Քայլիֆորնիա:

Փետրուար 2009- Միջ-դիւաններու խորհրդաժողով, Խորհրդաժողով, հիւսիսային Ամերիկայի երեք շրջաններու, Լոս Անճելըս:

20-21 Մարտ, 2009- Համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումի պատրաստութեան սեմինար, Ֆիլադելֆիա:

11-12 Ապրիլ, 2009- Խմբապետական ժողով, Այպընի:

5 Յուլիս, 2009- Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Մ. Նահանգներու միջ-մասնաճիւղային խաղեր, Փրովիտընս, հովանաւորութեամբ թեմի Առաջնորդ Օշական Արք. Զորյեանի:

19-23 Օգոստոս, 2009- Շրջանային ընդհանուր բանակում, Ուաշինկթըն:

1-8 Օգոստոս, 2009- Համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերու մասնակ-



ցութիւն, Հայաստան:

Սեպտեմբեր 2009- Վկայեալ կարգի եւ խմբապետներու վերաորակաւորման սեմինարի մասնակցութիւն, Լոս Անճելէս: Գայլիկ-արծուիկ ղեկավարներու սեմինար, Տիթրոյթ:

Ժողովը լսելէ ետք ընթացաւարտ Շրջանային Վարչութեան նիւթաբարոյական տեղեկագիրը, բարձր գնահատեց վարչութեան տարած աշխատանքը:

Այնուհետեւ, Ներկայացուցչական Ժողովը շարունակեց իր աշխատանքը, մշակելով յառաջիկայ երկամեակի մարզական եւ սկստական ծրագիրները,

յատկապէս յաջորդ միջ-մասնաճիւղային 20րդ մարզախաղերը, 2010ի Յուլիս 4ի շաբաթավերջին, Նիւ Ճրրգիի մէջ եւ շրջանի սկստական 25րդ շրջանային բանակումը, Օգոստոս 2010ին, Պոսթրն:

Ժողովը ներկայացուց շինիչ առաջարկներ եւ թելադրանքներ, բարելաւելու համար վերոյիշեալ գործունէութիւնները եւ դիմագրաւելու նոր սերունդին դրական պահանջները:

Ներկայացուցչական Ժողովի ընթացքին, լաւագոյն առիթ նկատելով, սկստական ճիւղի պատասխանատու, Ֆրրիտայի մասնաճիւղի անդամ, քոյր Արչօ Գանթարճեան խմբապետական պաշտօն ըստացաւ: Ան հաւատարմօրէն պիտի շարունակէ սկստական աշխատանքը Ֆրրիտայի գաղութէն ներս, զարկ տալով եւ աշխուժացնելով հայահոծ այս փոքր

շրջանը:

Ապա, ներկայացուցիչները ընտրեցին 2009-2011 երկամեակի Շրջանային Վարչութեան կազմը:

Եղբ. Պետիկ Տէր Վարդանեան, Պոսթրն

Եղբ. Յովիկ Արգարեան, Ուաշինկթըն

Եղբ. Լեւոն Սահակեան, Շիրակօ

Քոյր Երան Սիմոնեան, Ուաշինկթըն  
Եղբ. Վարդան Աղամեան, Տիթրոյթ  
Քոյր Էլիզապէթ Դրամկոչեան, Ֆրրիտայ

Եղբ. Թորոս Ոսպիկեան, Պոսթրն

Ընթացաւարտ Շրջանային Վարչութիւնը իր խորին շնորհակալութիւնը յայտնեց Ֆրրիտայի մասնաճիւղի վարչութեան եւ անդամներուն՝ Շրջանային Ներկայացուցչական Ժողովի հիւրընկալման համար:

Ժողովը փակուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի քայլերդով, Կիրակի, 11 Հոկտեմբեր 2009ի կէսօրէ ետք ժամը 3ին:

«ՄԱՐԶԻԿ»ԻՆ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

●Գարմէն Տէր Կարապետեան (Մ. Նահանգներ) \$100

US\$8ԱՆՔ

2Մժ՝ÈÈ ÆÛÏÆ ÐՊ  
Յարութիւն Անմահունի



*Hratch and Neshan Boyadjian*

Tel.: + 961-1-249554 Cell : + 961-3-882812/ + 961-3-882811  
Fax: +961-1-248556 Bourj Hammoud - Beirut - Lebanon  
Sector 4. 98th st. Bldg. #246 GF

E-mail: Hratch@goldenmountains.com Hratchboy@hotmail.com

<http://www.goldenmountains.com>





# ՔԱՀԱՄ-Ի 26ՐԴ ՄԱՐԶԱԽԱՊԵՐԸ ԸՆԹԱՑՔ ԱՌԻՆ ԱԹԼԷԹԻ ՄՐՑՈՒՄՆԵՐՈՎ

**26**րդ տարին ըլլալով, մեծ յաջողութեամբ կ'իրագործուին Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Մարզական Խորհուրդին կազմակերպած Քալիֆորնիոյ Հայ Աշակերտական Մարզախաղերը, որոնք ծանօթ են իբրեւ ՔԱՀԱՄ:

Վերջին քանի մը տարիներուն, նկատի ունենալով շրջանի հայկական վարժարաններու աշակերտութեան մեծ թիւով մասնակցութիւնը գեղեցիկ այս մարզախաղերուն, կազմակերպիչ յանձնախումբը հանգրուաններու բաժնած է զանոնք, առանձին մրցումներ կազմակերպելով իւրաքանչիւր մարզածելի համար:

Մարզախաղերը կ'ընդգրկեն աթլէթի, փինկ-փոնկի, վոլիպոլի, ֆութպոլի, պասքեթպոլի եւ ճատրակի մարզածելերը:

Առաջին հանգրուանով, Կիրակի, 14 Նոյեմբեր 2009ի առաւօտեան, բազմահարիւր աշակերտ-աշակերտուհիներու մասնակցութեամբ եւ մեծ յաջողութեամբ տեղի ունեցան 50, 100, 200, 400, 800 եւ 1500 մէթր վազքի, մէկ քայլ ոստումի, գունդ նետելու եւ դրօշարշաւի մրցումները:

Մրցումներու ամբողջական արդիւնքները եւ նկարները կարելի է տեսնել Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու շրջանի կայք էջին մէջ ([www.homenetmen.net](http://www.homenetmen.net)): Ստորեւ՝ վազքի մրցումներուն արդիւնքները:-

### ●50 ՄԵԹՐ ՎԱԶՔ●

#### ●Ա. Դասարան

Մանչեր- Ճորճիօ Գալայճեան (Ֆերահեան Ազգ. վրժ.)

Աղջիկներ- Էմիլի Պաղրամեան (Ֆերահեան Ազգ. վրժ.)

#### ●Բ. Դասարան

Մանչեր- Ռիչըրտ Յովհաննիսեան (Ֆերահեան Ազգ. վրժ.)

Աղջիկներ- Թալիա Յըստքեան (Հ.Բ.Ը.Մ.ի Մանուկեան-Տէմիրճեան վրժ.)

#### ●Գ. Դասարան

Մանչեր- Արամ Գազորեան (Ֆերահեան Ազգ. վրժ.)

Աղջիկներ- Թիֆընի Փափազեան (Հ.Բ.Ը.Մ.ի Մանուկեան-Տէմիրճեան վրժ.)

#### ●Դ. Դասարան

Մանչեր- Ատրինէ Ալվազեան (Հ.Բ.Ը.Մ.ի Մանուկեան-Տէմիրճեան վրժ.)

Աղջիկներ- Լոուի Լաչինեան (Հ.Բ.Ը.Մ.ի Մանուկեան-Տէմիրճեան վրժ.)



### ●100 ՄԵԹՐ ՎԱԶՔ●

#### ●Ա. Դասարան

Մանչեր- Էրիք Ենիգոմճեան (Ֆերահեան Ազգ. վրժ.)

Աղջիկներ- Էմիլի Պաղրամեան (Ֆերահեան Ազգ. վրժ.)

#### ●Բ. Դասարան

Մանչեր- Ռիչըրտ Յովհաննիսեան



(Ֆերահեան Ազգ. վրժ.)

Աղջիկներ- Թալիա Յըստքեան (Հ.Բ.Ը.Մ.ի Մանուկեան-Տէմիրճեան վրժ.)

#### ●Գ. Դասարան

Մանչեր- Արամ Գազորեան (Ֆերահեան Ազգ. վրժ.)

Աղջիկներ- Թիֆընի Փափազեան



(Հ.Բ.Ը.Մ.ի Մանուկեան-Տէմիրճեան վրժ.)

●Դ. Դասարան

Մանչեր- Սերոբ Ճէճէեան (Ալէք Փիլիպոս Ազգ. վրժ.)

Աղջիկներ- Ալեքսանտրա Ֆիլիպս (Հ.Բ.Ը.Մ.ի Մանուկեան-Տէմիրճեան վրժ.)

●Ե. Դասարան

Մանչեր- Նիքոլաս Ղազարեան (Հ.Բ.Ը.Մ.ի Մանուկեան-Տէմիրճեան վրժ.)

Աղջիկներ- Թինա Լաթչինեան (Հայ Բոյրերու վրժ.)

●Զ. Դասարան

Մանչեր- Ռոպէրթ Զաքարեան (Հ.Բ.Ը.Մ.ի Մանուկեան-Տէմիրճեան վրժ.)

Աղջիկներ- Թալին Վարդանեան (Հ.Բ.Ը.Մ.ի Մանուկեան-Տէմիրճեան վրժ.)

●Է. Դասարան

Մանչեր- Կարէն Սոթրըրի (Ալէք Փիլիպոս Ազգ. վրժ.)

Աղջիկներ- Մեկան Միրխանեան (Շամլեան Ազգ. վրժ.)

●Ը. Դասարան

Մանչեր- Արեգ Տէմիրճեան (Մերտինեան վրժ.)

Աղջիկներ- Էլլա Ստեփանեան (Շամլեան Ազգ. վրժ.)

●200 ՄԵԹՐ ՎԱԶՔ

●Ա. Դասարան

Մանչեր- Էրիք Ենիգոմճեան (Ֆերահեան Ազգ. վարժարան)

Աղջիկներ- Էմիլի Պաղրամեան (Ֆերահեան Ազգ. վրժ.)

●Բ. Դասարան

Մանչեր- Ռիչըրտ Յոյզաննիսեան (Ֆերահեան Ազգ. վրժ.)

Աղջիկներ- Թալիա Յըստքճեան (Հ.Բ.Ը.Մ.ի Մանուկեան-Տէմիրճեան վրժ.)

●Գ. Դասարան

Մանչեր- Արամ Գազորեան (Ֆերահեան Ազգ. վրժ.)

Աղջիկներ- Թիֆընի Փափազեան (Հ.Բ.Ը.Մ.ի Մանուկեան-Տէմիրճեան վրժ.)

●Դ. Դասարան

Մանչեր- Սերոբ Ճէճէեան (Ալէք Փիլիպոս Ազգ. վրժ.)



Աղջիկներ- Ալեքսանտրա Ֆիլիպս (Հ.Բ.Ը.Մ.ի Մանուկեան-Տէմիրճեան վրժ.)

●Ե. Դասարան

Մանչեր- Նիքոլաս Ղազարեան (Հ.Բ.Ը.Մ.ի Մանուկեան-Տէմիրճեան վրժ.)

Աղջիկներ- Ալեքսա Գաբրիէլեան (Ֆերահեան Ազգ. վրժ.)

●Զ. Դասարան

Մանչեր- Ռոպէրթ Զաքարեան (Հ.Բ.Ը.Մ.ի Մանուկեան-Տէմիրճեան վրժ.)

Աղջիկներ- Թալին Վարդանեան (Հ.Բ.Ը.Մ.ի Մանուկեան-Տէմիրճեան վրժ.)

●Է. Դասարան

Մանչեր- Կարէն Սոթրըրի (Ալէք Փիլիպոս Ազգ. վրժ.)

Աղջիկներ- Լիանա Մուրատեան (Սահակ Մեսրոպ վրժ.)

●Ը. Դասարան

Մանչեր- Արին Բժշկեան (Շամլեան Ազգ. վրժ.)

Աղջիկներ- Էլլա Ստեփանեան (Շամլեան Ազգ. վրժ.)

●400 ՄԵԹՐ ՎԱԶՔ

●Գ. Դասարան

Մանչեր- Քրիս Յարութիւնեան (Շամլեան Ազգ. վարժարան)

Աղջիկներ- Թիֆընի Փափազեան (Հ.Բ.Ը.Մ.ի Մանուկեան-Տէմիրճեան վրժ.)

●Դ. Դասարան

Մանչեր- Սերոբ Ճէճէեան (Ալէք Փիլիպոս Ազգ. վրժ.)

Աղջիկներ- Ալեքսա Գէորգեան (Ֆերահեան Ազգ. վրժ.)

●Ե. Դասարան

Մանչեր- Արէն Պասաք (Հ.Բ.Ը.Մ.ի Մանուկեան-Տէմիրճեան վրժ.)

Աղջիկներ- Ալեքսա Գաբրիէլեան (Ֆերահեան Ազգ. վրժ.)

●Զ. Դասարան

Մանչեր- Ռոպէրթ Զաքարեան (Հ.Բ.Ը.Մ.ի Մանուկեան-Տէմիրճեան վրժ.)

Աղջիկներ- Թալին Վարդանեան (Հ.Բ.Ը.Մ.ի Մանուկեան-Տէմիրճեան վրժ.)

●Է. Դասարան

Մանչեր- Կարէն Սոթրըրի (Ալէք Փիլիպոս Ազգ. վրժ.)

Աղջիկներ- Լիանա Մուրատեան (Սահակ Մեսրոպ վրժ.)

●Ը. Դասարան

Մանչեր- Մարք Կիւլտաք (Հ.Բ.Ը.Մ.ի Մանուկեան-Տէմիրճեան վրժ.)

Աղջիկներ- Էլլա Ստեփանեան (Շամլեան Ազգ. վրժ.)

●800 ՄԵԹՐ ՎԱԶՔ

●Ե. Դասարան

Մանչեր- Արմէն Մկրտչեան (Ալէք Փիլիպոս Ազգ. վրժ.)

●Զ. Դասարան

Մանչեր- Սեւակ Քէօսէեան (Շամլեան Ազգ. վրժ.)

Աղջիկներ- Թամար Գազարեան (Հայ Բոյրերու վրժ.)

●Է. Դասարան

Մանչեր- Կարէն Սոթրըրի (Ալէք Փիլիպոս Ազգ. վրժ.)

●Ը. Դասարան

Մանչեր- Արին Բժշկեան (Շամլեան Ազգ. վրժ.)

Աղջիկներ- Էլլա Ստեփանեան (Շամլեան Ազգ. վրժ.)

●1500 ՄԵԹՐ ՎԱԶՔ

●Է. Դասարան

Մանչեր- Կարէն Համամճեան (Ալէք Փիլիպոս Ազգ. վրժ.)

Աղջիկներ- Քաթիա Տապալաղեան (Սահակ Մեսրոպ վրժ.)

●Ը. Դասարան

Մանչեր- Ճորճ Քէօսէեան (Ալէք Փիլիպոս Ազգ. վրժ.)

Աղջիկներ- Նաթալի Քարամարտեան (Ֆերահեան Ազգ. վրժ.)





# Հ.Մ.Ը.Մ.Ի ՕՐԷՆՃ ՔԱՈՒՆԹԻԻ ՄԱՄՆԱՃԻԻՂԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՅՈԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

**Ձեփիւռ Մ. Օհաննեսեան  
ՕՐԷՆՃ ԲԱՈՒՆԹԻ**

**17** Հոկտեմբեր 2009 թուականը Հ.Մ.Ը.Մ.ի Օրէնճ Քաունթիի մեծ ընտանիքին համար եղաւ հպարտութեան եւ ուրախութեան օր մը:

Այդ օր, երեկոյեան, շրջանի եկեղեցւոյ «Ղուկասեան» սրահին մէջ, ներկայութեամբ գաղութի հոգեւոր հովիւ Հրանդ Քհնյ. Երէցեանի, Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Վարդգէս Շիրտրմեանի, գաղութի քոյր կազմակերպութիւններու ներկայացուցիչներու, ինչպէս նաեւ Հ.Մ.Ը.Մ.ական քոյր-եղբայրներու եւ աւելի քան երկու հարիւր ազգայիններու տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի «Սարգարապատ» մասնաճիւղի հիմնադրութեան 30ամեակի տօնակատարութիւնը:

Օրուան հանդիսավար եւ տօնակատարութեան յանձնախումբի ատենապետուհի քոյր Դուլին Վարդանեան բարի գալուստի ջերմ խօսքերէ ետք հրաւիրեց քահանայ հայրը, որպէսզի Տէրունական աղօթքով սկսի հանդիսութիւնը:

Ապա, ատենապետ եղբ. Պաղտիկ Օհանեան խօսք առնելով նախ ներկայացուց 2008-2009 տարեշրջանի վարչական կազմը:

Եղբայրը անդրադարձաւ «Սարգարապատ» մասնաճիւղի անցեալի աշխատանքներուն, անոր ունեցած դժուարութիւններուն եւ արձանագրած յաջողութիւններուն: Ան մասնաշրջեց, թէ ամէնէն կարեւորը «Հ.Մ.Ը.Մ.ի ոգին է, որ միշտ



կը գերելիս է: Այդ ոգին է, որ կը կազմաւորէ անձի մը կեանքը եւ կը զօրացնէ անոր սէրը իր հայրենիքին, ընտանիքին եւ գաղութին հանդէպ»: Շարունակելով, ան աւելցուց. «Այսօր մենք հպարտութեամբ եւ խանդավառութեամբ կը տօնենք Հ.Մ.Ը.Մ.ի Օրէնճ Քաունթիի «Սարգարապատ» մասնաճիւղի 30 տարիներու գործունէութիւնը: Մեր ուրախութիւնը եւ հպարտանքը միաձուլած ենք մեր քրտինքին եւ արցունքին՝ յաղթելու, կատարելագործելու, բարձրանալու եւ բարձրացընելու նշանաբանով»:

Եղբայրը խօսեցաւ մասնաճիւղի անձնական մարզարան մը ունենալու երկար տարիներու երազին մասին եւ յայտնեց, որ իբրեւ գաղութի անդամներ, մեր պատասխանատուութիւնն է սիրել Հ.Մ.Ը.Մ.ը, եկեղեցին, Հ.Ե.Դ.ը, միւս բոլոր կազմակերպութիւնները եւ աշխատիլ անոնց վերելքին համար:

Եղբ. Օհանեան իր խօսքին աւարտին վարչութեան անունով շնորհակտրեց եւ շնորհակալութիւն յայտնեց 30ամեակի կազմակերպիչ յանձնախումբի ատենապետուհի քոյր Դուլին Վարդանեանին, փոխ ատենապետուհի քոյր Թային Կուրտիքեանին եւ բոլոր անդամներուն՝ ձեռնարկին յաջողութեան ի խնդիր իրենց տարած անխոնջ աշխատանքին համար:

Ապա, յանձնախումբի անդամները հրաւիրուեցան 30ամեակի կարկանդակը հատելու համար, որմէ ետք բեմ հրաւիրուեցան նաեւ մասնաճիւղի հիմնադրութեանն ի վեր բոլոր ատենապետները՝ եղբայրներ Վարդան Տիշոյեան, Վիգէն Աբէլեան, քոյրեր Ռու-





պինա Թիւթիւնճեան, Շաքէ Զոհրապեան, եղբ. Վիգէն Տազսեան, քոյր Զարուհի Տէր Դաւիթեան եւ եղբ. Պատրիկ Օհանեան: Առ ի գնահատանք իրենց ունեցած տարիներու անշահախնդիր աշխատանքին, եղբայրներուն եւ քոյրերուն յանձնուեցան յատուկ յուշանուէրներ:

Տօնակատարութեան պաշտօնական բաժինի աւարտին բեմ հրաւիրուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Վարդգէս Շիրտրմեան: Ան շնորհաւորեց «Սարգարապատ» մասնաճիւղի 30 տարիներու գործունէութիւնը եւ իր խօսքին մէջ յիշեց, թէ Օրէնճ Քառուկիին հակառակ փոքր գաղութ մը ըլլալուն, տուած է երեք անձնաւորութիւններ, որոնք շրջանային մակարդակով պաշտօններ ունեցած են եւ եղած են շատ գործունեայ, մեծ ներդրում ունենալով Հ.Մ.Ը.Մ.ի յաջողութեան եւ վերելքին մէջ:



Տօնակատարութեան ընթացքին ակնյայտ էր երիտասարդութեան մասնակցութիւնը եւ խանդավառութիւնը: Կարելի է ըսել սրահի ներկաներուն ջախջախիչ մեծամասնութիւնը երիտասարդ Հ.Մ.Ը.Մ.ականներ էին, որոնք սրահին շուրջ գետեղուած պատաններուն վրայ անդադար երեւցող

նկարներուն մէջէն կը փորձէին յիշել իրենց յիշատակելի օրերը, ըլլան անոնք նկարուած բանակումի, մարզախաղերու, սկառտական, ժողովներու կամ ընկերային խրախճանքներու ընթացքին:

Մինչեւ ուշ ժամեր ներկաները պարեցին եւ զուարճացան: Բարի երթ, նորանոր յաջողութիւններ եւ նուաճումներ կը մաղթենք Օրէնճ Քառուկիի Հ.Մ.Ը.Մ.ի մեր սիրելի «Սարգարապատ» մասնաճիւղին:

The Champ: Élysées just steps away and the Parc Monceau nearby

# HOTEL

★ ★ ★

## PAVILLON MONCEAU

### PARIS

Full of charme,  
Tastefully decorated 36 rooms  
and 6 suites with individual  
heating/air conditioning,  
direct access telephone line,  
internet connection, minibar,  
safety box and satellite TV.  
Private bathroom with hairdryer.  
The suites can accommodate  
3 adults or a family  
with parents and 2 children.

43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris  
Tel' 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38  
infos@pavillon-monceau.com  
www.pavillon-monceau.com





# Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՄՄԱՆԻ ՄԱՍՆԱՃԻԻՂԻ ՄԿԱՈՒՏԱԿԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ

## Ալիս ՊԵՏՆԵԱՆ ԱՄՍԱՆ

**Հ**ՄԸՄ-ի Ամմանի մասնաճյուղի սկաուտական կազմը անցնող տարեշրջանի իր գործունեությունը փակեց երդման արարողությունում մը, որ տեղի ունեցավ շրջանի սկաուտների շրջափակին մէջ:

Տարեկան երդման արարողությունը առիթ մը եղաւ վերջի շեյուր անցնող տարուան աշխատանքները եւ գնահատելու մասնաճյուղի խմբապետներուն ի գործ դրած ճիգերը:

Շեփոթախումբի եղանակներով, օրուան հանդիսությունը սկսաւ մասնաճյուղի 75 հոգիոց սկաուտական կազմին տողանցքով, ներկայութեամբ ՀՄԸՄ-ի եւ ՀՕՄ-ի վարչություններու, ՀՄԸՄ-ի նախկին ատենապետներու եւ խմբապետներու, ինչպէս նաեւ մեծ թիւով ծնողներու, միութեան անդամներու եւ համակիրներու:

Սկաուտներու կողմէ հայերէնով եւ արաբերէնով խօսքեր արտասանեցին քոյր Ալիք Տաքէսեան եւ եղբ. Հրակ Մուրատեան: Անոնք անդրադարձան ՀՄԸՄ-ի սկաուտական կեանքի բարերար ազդեցութեան՝ հայ նորահաս սերունդին վրայ: Անոնք շեշտեցին Ամմանի նման փոքրաթիւ գաղութէ մը ներս ՀՄԸՄ-ի սկաուտութեան ունեցած դերը, որ քով-քովի բերելով հայ փոքրերն ու երիտասարդները, անոնց կը սորվեցնէ միութենական կեանք, պատասխանատուութիւն եւ ազգային գիտակցութիւն:

Օրուան հանդիսավար քոյր Գլաւա Ինգապապեան կազմի կրտսերագոյն անդամները հրաւիրեց տալու ՀՄԸՄ-ի իրենց առաջին խոստումը, առաջնորդութեամբ գալլիկական բաժնի խմբապետ եղբ. Սեւան Պէննէեանի: Յաջորդեց արի-արենոյշներու երգումը, առաջնորդութեամբ սկաուտական բաժնի խմբա-



Արի-արենոյշներու երգում:

պետուհի քոյր Ալին Պէննէեանի եւ, վերջապէս, երէց-պարմանուհիներու ուխտը, առաջնորդութեամբ մասնաճյուղի խմբապետ եղբ. Բաֆֆի Չաքմաքեանի:

Մասնաճյուղի խմբապետութեան խօսքը ներկայացուց եղբ. Սեւան Պէննէեան, շեշտը դնելով դեկավարներու պարտականութիւններուն եւ անոնց ուսերուն դրուած ծանր պատասխանատուութեան՝ առաքինի նկարագրի տէր անհատներ պատրաստելու եւ ազգային դաստիարակութիւն փոխանցելու ՀՄԸՄ-ի նոր սերունդներուն:

Եղբ. Պէննէեան անդրադարձաւ խմբապետներու եւ կազմի պատասխանատու կազմի նուիրեալ գործին, որուն կարեւորագոյն յատկանիշն է սերունդէ սերունդ ծառայութիւն միութեան գաղափարաբանութեան եւ պարտականութեան ոգիի եւ գործի փոխանցում նոր սերունդին:

Օրուան հանդիսությունը ընդգրկեց նաեւ աստիճանատուցութիւն եւ սկաուտական Ա. եւ Բ. կարգի պէճերու փոխանցում: Վկայագիրներով գնահատուեցան մասնաճյուղի լաւագոյն գալլիկ-սկաուտները, կազմի տիպար անդամները եւ լաւագոյն խմբակները:

Քոյր Ռիթա Հասարճեան արտասանեց Օ. Չարմուռնիի «Հայր»։ Սկաուտներէն խումբ մը ներկայացուց բուրգի ձեւեր: Ապա յաջորդեց սահիկներու ցուցադրութիւն՝ անցնող տարեշրջանի սկաուտական գործունեությունից մասին:

Այս առիթով, վարչութեան ատենապետ եղբ. Կարօ Հերտէմեան եւ սկաուտականի ներկայացուցիչ եղբ. Կարօ Եումճեան խմբապետութեան կողմէ պատրաստուած յատուկ նուէրներ յանձնեցին քոյր պատասխանատուներուն՝ գնահատելով անոնց յարատեւ աշխատանքն ու գոհաբերութիւնը:

Տպաւորիչ արարողությունը փակուեցաւ «Յաւաջ նահատակ» քայլերգով:



Վարչութեան ատենապետը կը գնահատէ աստիճանաւոր պատասխանատուները:



# ՎԵՐԱՄՈՒՏ ԵՒ ՄԿԱՈՒՏԱԿԱՆ ՄԻՕՐԵԱՅ ԲԱՆԱԿՈՒՄ



Միօրեայ բանակումի մասնակիցներ: **SEP 20 2009**

## Աստղիկ Գարագաշեան ԱՄՍԱՆ

**Հ**Մ-Ը-Մ-ի Ամմանի մասնաճիւղի արի-արենոյճներուն եւ գայլիկ-արծուիկներուն նոր տարեշրջանի սկստուտական վերամուտը կատարուեցաւ բարձր տրամադրութեամբ, հակառակ քաղաքին մէջ դպրոցներու եւ հաւաքական ձեռնարկներու ուշացման, «խոզի կռիւի»ի հիւանդութեան պատճառով:

Արդարեւ, ամրան հինգ շաբթուան դադարէն ետք, վերամուտին, սկստուտներն ու գայլիկները խանդավառութեամբ ուղղուեցան Ամմանի ամէնէն արդիական գրօսավայրը (Jingo's Jungle), ուր լաւ ժամանակ անցուցին:


Մինչ սկստուտները ուրախ էին վերամուտով, խմբապետական կազմը անցաւ իր նոր տարեշրջանի ծրագիրին, ջանալով կակուղ թաթիկները արդիական ծրագիրներով ներգրտել եւ միութենական դաստիարակութեամբ անոնց մէջ ապագայ լաւ մարդեր պատրաստել:

Այս իմաստով, մասնաճիւղին սկստուտական կազմը կատարեց միօրեայ բանակում, որ տեղի ունեցաւ քաղաքին մօտակայ Շները հաստատութեան բանակավայրը:

Բանակումին բացումը կատարուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով: Ապա, խմբապետները ներկայացուցին բանակումին օրէնքները եւ պաշտօնները:

Բոլոր խմբակները ունեցան դասախօսութիւններ, որոնց մէջ մէկուն նիւթն էր Հայաստան-Թուրքիա համաձայնութիւնը եւ անոր ազդեցութիւնը Հայ Դատի եւ Յեղասպանութեան ճանաչման աշխատանքներուն վրայ: Նիւթը ներկայացուց թոյր Ալին Պէննէեան: Նիւթը Հայ Դատի հետապնդման կարեւոր հարցերէն մէկը ըլլալով, սկստուտները եւ գայլիկները կատարեցին կարծիքներու փոխանակում, նշելով թէ արդիական ձեւերով կրնանք օտարին ներկայացնել Սփիւռքի կեցուածքը եւ մեր Դատը:

Օրուան միւս հետաքրքրական նիւթը ներկայացուց թոյր



Կակուղ թաթիկներ դասախօսութեան պահուն: **SEP 20 2009**

Կասիա Տէմիրճեան՝ «խոզի կռիւի»ի հիւանդութեան մասին, բացատրելով հիմնական կէտեր, թէ ի՞նչպէս կարելի է հիւանդութիւնը սահմանափակել կարելի եղածին չափ:

Այլ մտահոգիչ հարցի մը մասին դասախօսեց թոյր Աստղիկ Գարագաշեան (Չուր եւ վառելանիւթ սպառելու եւ գործածելու լաւագոյն միջոցները): Այս առիթով բոլոր սկստուտները իրենց առօրեայէն օրինակներ տուին, թէ ի՞նչպէս կրնան աւելի լաւ ընթացք ունենալ:

Օրուան համեղ ճաշը պատրաստեց Հ.Օ.Մ-ի վարչութիւնը եւ դադարէն ետք յայտագիրը վերսկսաւ խմբային մրցումով: Ապա, բոլոր խմբակները ունեցան ռալի մրցում մը՝ չորս կապ-հանգոյց սորվելով:

Յայտագիրը ընդգրկեց նաեւ երգի հետաքրքրական մրցում մը, ուր բոլորը սորվեցան երգերու բառեր, երգերու կապուած դէպքեր ու դէմքեր:

Միօրեայ բանակումի աւարտին տեղի ունեցաւ երգման արարողութիւն: Ընթրիքէն ետք կատարուեցաւ պարի մրցում, որմէ ետք յայտագիրը փակուեցաւ «Ով հայ արի» քայլերգով:





Սեմինարին մասնակցող կազմը:

JUL 2 2009



Աստիճանաւորներ կը մասնակցին ակումբի մաքրութեան աշխատանքին:

# Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՄՍԱՆԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ՄԿԱՌԻՏԱԿԱՆ 24 ԺԱՄՈՒՄՆ ՍԵՄԻՆԱՐԸ

## Գլխաւոր Ինգապապեան ԱՄՍԱՆ

**Հ**ՄԸՄ-ի Ամմանի մասնաճիւղի սկաուտական 24 ժամուան սեմինարը տեղի ունեցաւ Ամմանի ակումբին մէջ, ըստ նախատեսուած յայտագրի: Սեմինարին ընթացքին փոխանցուեցան հետեւեալ նիւթերը:-

- Նախնական դարմանում
- Կարգապահական հրահանգներ
- ՀՄԸՄ-ի ծրագիր-կանոնագիրը
- Ցայտագրի պատրաստութիւն

Սեմինարը իր աշխատանքներուն սկսաւ կէսօրուան ժամը 2ին: Սեմինարին առաջին նիւթը՝ «Նախնական դարմանում»ը փոխանցեց Ամմանի շտապ օգնութեան բաժանմունքէն սպայ մը: Ան բացատրութիւններ տուաւ արեւահարութեան, արուեստական շնչառութեան, խայթուածքներու եւ կոտորուածքներու մասին:

Դասախօսութենէն ետք, սեմինարին մասնակիցները պտոյտ մը ունեցան Ամմանի հին թաղերէն ժապալ Ամմանի մէջ: Անոնք շրջեցան քաղաքին հնագոյն թաղերէն մէկը նկատուող շրջանը: Ծանօթացան շրջանի առաջին դպրոցներուն, թագաւորին պալատին եւ ապա, ընթրեւէ ետք, վերադարձան ակումբ եւ հետեւեցան կարգապահական հրահանգներին:

հանգներ նիւթով դասախօսութեան:

Յաջորդ օր, սեմինարին աշխատանքները շարունակուեցան երկու դասախօսութեամբ: Սկաուտներուն ներկայացուեցաւ ՀՄԸՄ-ի ծրագիր-կանոնագիրը եւ յայտագրի մը պատրաստութեան ձեւերը:

Այնուհետեւ, սեմինարին մասնակիցները բաժնուեցան խմբակներու եւ միասնաբար ձեւարկեցին ակումբի մաքրութեան աշխատանքին, ինչ որ բոլորին մօտ ամրապնդեց ծառայութեան ոգին: Մաքրութիւնը ընդգրկեց ակումբին հին նկարները եւ բաժակները, որոնք բոլորը կոկուեցան եւ դասաւորուեցան լաւ ձեւով:

Մաքրութեան յաջողեց կէսօրուան ճաշը, որմէ ետք սեմինարի մասնակիցներուն միացան գայլիկները: Կազմակերպուեցաւ ճիւղերու ներկայացման մրցաշարք: Բ. կարգի պատասխանատուներու պատրաստած մրցաշարքը արժանացաւ բոլորին գնահատանքին՝ մեծ խանդավառութիւն ստեղծելով

մասնակիցներուն մօտ: Մրցանակակիր սկաուտները արժանացան յատուկ նուէրներու, բանակումներու համար գործածական պնակներ եւ գաւաթներ:

Դասախօսութիւններու եւ խաղերու աւարտին, ակումբ ներկայացան սկաուտներու ծնողները եւ մասնակցեցան մասնաճիւղին նիւթական եկամուտ ապահովող վիճակահանութեան խաղին եւ ընթրիքին: Երեկոն անցաւ ակնկալուած յաջողութեամբ, հաճելի յիշատակներ ձգելով բոլորին մօտ:



Նախնական դարմանութիւն դասախօսութեան պահուն:

JUL 2 2009



# ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԶԵՌՆԱՐԿՆԵՐ, ՄԻՕՐԵԱՅ ԲԱՆԱԿՈՒՄՆԵՐ

## Թղթակից ԱՄՄԱՆ

**Հ**ՄԸՄԻ Ամմանի մասնաճիւղի սկստուական կազմը 2009ին ունեցաւ յատուկ ձեռնարկներ՝ սկստուական եւ գայլիկական իր բաժանմունքներուն եւ պատասխանատու կազմին համար:

Կազմի անդամներուն հետաքրքրութիւնները գոհացնելու եւ Ձերդ դարու նորութիւններուն հետ քայլ պահելու համար, մասնաճիւղին խմբապետական կազմը ծրագրեց շարք մը ձեռնարկներ:

Յորդանանի տեսարժան վայրերուն ծանօթանալու նպատակով, սկստուտները ունեցան շատ հաճելի պտոյտ-ըրարշաւ մը Ուատի Պըն Համատ գետը, Ամմանէն 1.5 ժամ հեռու, Քարաքի շրջանը:

Պատասխանատու կազմին կողքին արշաւին մասնակցեցան Ա. եւ Բ. կարգի սկստուտներ: Արշաւը տեղի ունեցաւ ջուրի մէջ: Մասնակցողները մօտ 4 քիլոմետր հեռաւորութիւն լողալով կտրե-



Քարաքի խաչակիրներու շրջանէն մնացած բերդը:

ցին՝ մասնագէտ մարզիչի մը հսկողութեամբ:

Արշաւը բոլորին սորվեցուց իրարու օգնել, ուշադիր ըլլալ եւ չարքաշ ըլլալ: Աւարտին, սկստուտները հասան ցամաք եւ ճաշակեցին համեղ խորոված:

Քարաքի խաչակիրներու շրջանէն մնացած հիւանդի բերդը այցելելէ ետք,

բոլորը բարձր տրամադրութիւններով վերադարձան սկուսմբ:

Սկստուտները ունեցան նաեւ միօրեայ բանակում մը սկուսմբէն ներս: Բանակումը կեդրոնացաւ յայտագիր մշակելու եւ ապագայ Փոխ Առաջնորդներ պատրաստելու ծրագիրին վրայ: Բանակումին սկստուտները եփեցին իրենց ընթրիքը եւ պատասխանատուներու պատրաստած դասախօսութիւններու կողքին, բոլորը ներկայացուցին տասը վայրկեաննոց նիւթեր:

Գայլիկական բաժանմունքի գործունէութիւնը ընդգրկեց նոր եւ գրաւիչ ձեռնարկներ, ինչպէս՝ չարքաշութեան խաղափայրի այցելութիւն: Գայլիկները եւս ունեցան միօրեայ բանակում սկուսմբէն ներս: Պատրաստեցին խարոյկ, սահիկներով դասախօսութիւն մը ունեցան ազգային հերոսներու մասին եւ կատարեցին խմբային գանազան խաղեր: Յաջորդ առաւօտեան գայլիկները սկուսմբէն ուղղուեցան մալրաքաղաքի մեծագոյն որբանոցը եւ նուէրներով ուրախացուցին որբերը:



Որբանոց այցելութիւն:



# ԵՂԲ. ՄԿՐՏԻՉ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ



**Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ Շրջանային Վարչութիւն ՅԱԼԷՊ**

**Ե**ղբ. Մկրտիչ Գրիգորեանի մահը խոր վիշտով համակեց ո՛չ միայն իր հարազատները, այլեւ՝ Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ ամբողջ ընտանիքը:

Կորուստը մեծ էր: Իր մահով կորսնցուցինք հաւատաւոր, անաչառ, համեստ եւ պարտաճանաչ անդամ մը, որ ամբողջ 45 տարիներ ծառայեց իր շատ սիրելի միութեան, նախ իբրեւ մարզիկ՝ բերդապահ: Ապա, հեծելաբաշտի աշխարհ ուղղուելով, տարիներ շարունակ ան բարձր պահեց Հ.Մ.Ը.Մ.ի անունը, հանդիսանալով Սուրբոյ եւ արաբական երկիրներու ախոյեան: Այնուհետեւ ան ծառայեց իբրեւ վարչական:

1980ին եղբ. Մկրտիչ փոխադրուեցաւ Գամիշլի, ուր անմիջապէս լծուեցաւ միութենական աշխատանքի: Եղաւ Հ.Մ.Ը.Մ.ի Գամիշլիի մասնաճիւղի վարչական: Վերջին



երեք տարիներուն ան մաս կազմեց Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ Շրջանային Վարչութեան, ներկայացնելով Գամիշլիի մասնաճիւղը:

Իր մահէն քանի մը օր առաջ ժամադրուած էինք միասին Դամասկոս, ուր տեղի պիտի ունենային պասքեթպոլի միջմասնաճիւղային խաղեր: Սակայն, եղբ. Մկրտիչ փոխանակ մեզի հետ դաշտ երթալու՝ հիւանդանոց ուղղուեցաւ, եւ թարկուելու համար սրտի վիրաբուժութեան դործողութեան, եւ այդ վիճակին մէջ իսկ չմոռցաւ յաջողութիւն մաղթել մրցաշարին: Բայց աւա՛ղ, ան իր հոգին աւանդեց անակնկալօրէն:

Եղբ. Մկրտիչ ծնած էր Հայէս, 1948ին: Ամուսնացած էր եւ ունէր երեք զաւակներ, որոնք կը շարունակեն իրենց հօր միութենական աշխատանքը:

Բի՛ւր յարգանք միութենական իր երկարամեայ վաստակին:

# ԴԵՌ ՇԱՏ ԲԱՆ ՈՒՆԷՐ ՏԱԼԻՔ Հ.Մ.Ը.Մ.ԻՆ

**Հ.Մ.Ը.Մ.ի Ժրտէյտէի մասնաճիւղի վարչութիւն ԺԸՏԷՅՏԷ**

**Ճ**ակատադիրի մէկ անհամ կատակը Նոյեմբերին մեզմէ իլեց հազիւ 25 գարուններ ապրած եղբ. Շահէ Կիւվլէքճեանը, որ սիրուած ու յարգուած էր բոլորէն:

Անհաւատալի է, որ այլեւս չկայ եղբ. Շահէն:

Անհաւատալի է, որ այլեւս Հ.Մ.Ը.Մ.ի Ժրտէյտէի մասնաճիւղի սկաուտական կիրակնօրեայ հաւաքներէն պիտի բացակայի



բոլորին սիրելի միաւորի խմբապետ եղբայրը:

Չենք ուզեր համոզուիլ, որ այլեւս պիտի չտեսնենք զինք ու իր անմեղ ժպիտը:



Ե ղ բ . Շահէ Կիւվլէքճեան փոքր տարիքէն հասակ առաւ Հ.Մ.Ը.Մ.ի Ժրտէյտէի մասնաճիւղի սկաուտական շարքերուն մէջ եւ կալուղ թաթիկէն մինչեւ միաւորի խմբապետ, տարիներու ընթացքին իր պարտականութիւնները կատարեց անթերի ձեւով:

Նախքան իր վերջին հրաժեշտը, ան կատարեց նաեւ Հ.Մ.Ը.Մ.ական իր վերջին



պարտաւորութիւնները:

Ամրան, մասնաճիւղի տարեկան բանակումին իր գործնական մասնակցութիւնը բերելէ ետք, Հոկտեմբերին, ան մասնակցեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Ներկայացուցչական 40րդ ժողովին:

Այո, շատ կարճ եղաւ եղբ. Շահէին կեանքը: Դեռ շատ բան ունէր առնելիք կեանքէն եւ շատ բան ունէր տալիք իր անմիջական շրջապատին ու Հ.Մ.Ը.Մ.ին:

Այսօր, Փիզիքապէս ան չկայ մեր հետ, բայց Հ.Մ.Ը.Մ.ի

հանդէպ իր ունեցած հաւատքը, խոր համոզումը եւ անկեղծ նուիրումը ամէնօրեայ ներկայութիւն են մեր մէջ ու խթանիչ ուժ կը հանդիսանան մեզի:

Եւ մենք վստահ ենք, իր հոգին այժմ կը սաւառնի ու վերէն հետեւի հոն, ուր որ Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտները իրենց հաւաքները եւ բանակումները կը կատարեն:

Խոնկ ու մոմ իր անմոռաց յիշատակին:

# ԵՂԲ. ՇԱՀԻ ԿԻՒՎԼԷՔՃԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Լիբանանի Շրջանային Խմբապետութիւն  
ՊՈՒՐՑ ՀՍՄՈՒՏ



**Չ**ենք ուզեր հաւատալ, որ այլեւս մեզմէ բաժնուած է եղբ. Շահէ Կիւվլէքճեանը: Սակայն կեանքի օրէնքներէն մէկն է, որ մեզ կը պարտադրէ ընդունիլ այն իրականութիւնը, որ մահ կայ: Այս պարագային բաժանումը միայն Փիզիքական է:

Եղբ. Շահէ Կիւվլէքճեան փոքր տարիքէն անդամակցեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի ժրտէյտէի մասնաճիւղին՝ ըլլալով տիպար ու հնազանդ դայիկ մը, գործադրելով իրեն տրուած թելադրանքները: 11 տարեկանին ան փոխանցուեցաւ արիական խումբ: Հոն սնանեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական գիտելիքներով եւ շարունակեց մնալ տիպար ու հնազանդ արի:

Եղբ. Շահէ երբ տուաւ իր արիական խոստումը եւ արժանացաւ փողկապին, բառացիօրէն չկրկնեց սկաուտական խոստումին տողերը, այլ՝ լուռ ու մունջ գործադրեց զանոնք իր սկաուտական եւ առօրեայ կեանքին մէջ:

Ան հաւատաց Աստուծոյ եւ ծառայեց ազգին: Եղաւ աշխատասէր ու պարտաճանաչ խմբապետ, գիտակից՝ իրեն յանձնուած պարտականութեան եւ պարտաւորութեան: Ան ճիշտ չխնայեց իր լաւագոյնը կատարելու՝ մէկզի դնելով իր ընտանեկան ծանր բեռը եւ առաջնահերթութիւն տալով իր մեծ ընտանիքին՝ Հ.Մ.Ը.Մ.ին:

Իրեն տարեկից խմբապետները կը վկայեն, որ եղբ. Շահէ սիրուած էր բոլորին կողմէ եւ իր կարգին կը սիրէր բոլորը անխտիր: Եղբայր ու ընկեր էր, իր մեղմ ու համեստ նկարագիրով մեծն ու փոքրը կ'ուղղէր դէպի ճիշդը:

Ան հոգեպէս ուրախ ու գոհ կը զգար, երբ օգնութեան ձեռք երկարէր: Մէկ խօսքով, եղբ. Շահէ տիպար երիտասար-



դի մը յատկանիչները ունէր:

Իր վաղահաս մահով Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի մեծ ընտանիքը, մանաւանդ ժրտէյտէի մասնաճիւղը, կորսնցուց խմբապետ մը, որ տակաւին կատարելիք ունէր: Սակայն, վստահաբար, իրեն սիրողները պիտի շարունակեն իր ուղին եւ կատարեն իրենց լաւագոյնը, որպէսզի եղբայր Շահէին յիշատակը վառ մնայ ու յիշուի սերունդէ սերունդ:

Վարձքը կատար եղբ. Շահէ, կարճ ապրեցար, բայց քու բարի գործերուդ հետքը ձգեցիր Հ.Մ.Ը.Մ.ի շարքերէն ներս: Հանգչէ՛ խաղաղ:



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆՆԵՐ

# ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

**Քաղեց՝ Սալբի Լատոյեան  
ՊԵՅՐՈՒԹ**

**Ե**ւրոպական Միութեան ստեղծման մասին առաջին անգամ արտայայտուած է Ֆրանսայի նախկին արտաքին գործոց նախարար Ռոպէր Շոմփէն: 9 Մայիս 1950ին ան յայտնած է, թէ պէտք է ստեղծել Եւրոպայի ժողովուրդները միացնող պետութիւն մը: Այս թուականը կը նկատուի Եւրոպական Միութեան ստեղծման օր:

Եւրոպական Միութեան նպատակն է համախմբել եւրոպական երկիրները եւ քաղաքական, տնտեսական, ընկերային եւ մշակութային սերտ կապեր ստեղծել անոնց միջեւ:

Այսօր Եւրոպական Միութեան մաս կը կազմեն բազմաթիւ երկիրներ (Գերմանիա, Ֆրանսա, Սպանիա, Յունաստան...): Կան նաեւ երկիրներ, որոնք իրենց թեկնածութիւնը դրած են Միութեան անդամակցութեան: Թուրքիան այդ երկիրներու շարքին է:

Եւրոպական Միութեան դրամանիշը եւրոն է: Միութիւնը ունի իր քայլերգը եւ դրօշը, որուն գոյնը կապոյտ է: Կապոյտը կը խորհրդանշէ երկիրները, իսկ շրջանակաձեւ 12 աստղերը կը յատկանշեն միութիւնն ու գորութիւնը:

**ԹՈՒՐԳԻԱ ԵՒՐՈՊԱԿԱՆ  
ՄԻՈՒԹԵԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ**

Եւրոպական Միութեան անդամ դառնալու թուրքիոյ առաջարկը արժարժուեցաւ Եւրոպական Խորհրդարանի 17 Դեկտեմբեր 2004ի նիստին: Խորհրդարանը որոշեց 3 Հոկտեմբեր 2005ին սկսիլ Միութեան անդամակցութեան թուրքիոյ բանակցութիւններուն: Սակայն, միաժամանակ, թուրքիոյ դիմաց դրուեցան կարգ մը հարցեր, որոնց լուծումէն ետք միայն կարելի պիտի ըլլայ անոր անդամակցութեան հարցին վճռումը:

Թուրքիոյ համար պայման դրուած հարցերն են.-

- Հայկական Յեղասպանութեան ճանաչումը:
- Կիպրոսի հարցին լուծումը:
- Մարդկային իրաւունքներու յարգումը:





# ՏԱՐՕՐԻՆԱԿ, ԲԱՅՑ ԻՐԱԽ...

## ՉՈՐՍ ԱԿԱՆՁՈՎ ԿԱՏՈՒՆ

Մ. Նահանգներու Շիքալօ քաղաքին մէջ կ'ապրի Եոտա անունով կատու մը, որ ունի... չորս ականջ: Ան կը պատկանի ճաշարանատիրոջ մը:

Եոտային աւելորդ երկու ականջները պարզապէս մորթ են եւ լսելու զգայարանին հետ որեւէ կապ չունին: Կատուն իր իսկական երկու ականջներով կը լսէ շատ լաւ:



### 4225 ՕՂՈՎ ԿԻՆԸ

Էլիան Տաւրտսըն աշխարհի ամէնէն շատ օղեր ունեցող կինն է: Սակայն, այդ օղերը իր հաւաքածոյին մէջ չեն, այլ... մարմնին վրայ: Տաւրտսըն մարմնին բոլոր մասերուն վրայ ծակած է ահագին ծակեր՝ իր 4225 օղերը կախելու համար:

### ԾՄՍ՝ԷՁՈՒ



Ո՞վ է, ի՞նչ է: Գիրուկ է, բայց ճարպ չունի: Երես ունի, բայց դէմք չունի:

## ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

# ՕՐԱՑՈՅՑԸ



**Օ**րացոյցը ցոյց կու տայ, թէ այսօր ո՞ր ամիսն է, ո՞ր շաբաթը եւ ո՞ր օրը:

Օրացոյցի գործածութիւնը սկսած է Եգիպտոսի մէջ: Ամառնային արեւադարձի ժամանակ, եգիպտացիները երկինքին մէջ կը նկատեն պայծառ աստղ մը, զոր կը կոչեն Սոտիս:

Սոտիսի մէկ երեւումէն մինչեւ միւսը, եգիպտացիները կը հաշուեն 365 օր: Հետեւաբար, անոնք այդ երկար ժամանակը կը բաժնեն 12 մասի, իւրաքանչիւրը 30 օրով: Իսկ մնացեալ 5 օրը, իբրեւ յաւելում, անոնք կը գետեղեն տարուան վերջաւորութեան:

Շուտով, եգիպտացիները կը նկատեն, որ 8 տարին անգամ մը Սոտիսը կ'ուշանայ մէկ օրով: Անոնք անգամ մը եւս կը հաշուեն իրենց ժամանակը եւ կը տեսնեն, որ անիկա հաւասար է 365 օրուան եւ 8 ժամուան:

Քրիստոսէ առաջ 46 թուականին, Հռոմի Յուլիոս կայսրը օրացոյցին մէջ կը մտցնէ փոփոխութիւն մը եւ ամիսները կը վերածէ տարբեր տեւողութեամբ ժամանակներու: Կարգ մը ամիսներ կը ճշդուին 31 օր, ուրիշներ՝ 30 օր: Իսկ Փետրուարը կ'ըլլայ 28 օր: Բայց կը ծագի ուրիշ հարց մը. յաւելեալ 8 ժամուան հարցը: Կայսրը զայն եւս կը լուծէ՝ չորս տարին անգամ մը Փետրուարը դարձնելով 29 օր: Այնուհետեւ, 366 օր ունեցող տարին կը կոչուի նահանջ տարի:

Մեր նախնիները օրացոյցի ամիսներուն, օրերուն, ցերեկային եւ երեկոյեան ժամերուն տուած են յատուկ անուններ: 551ին անոնք ընդունած են նոր օրացոյց մը, որ այսօր ծանօթ է հայոց նոր տոմար անունով: Հին օրացոյցով հայոց թուականը գիտնալու համար պէտք է ներկայ թուականէն (2010) հանել 551 տարին: Կ'ունենանք 1459 թուականը, որ եկեղեցւոյ օրացոյցներուն մէջ կը յիշուի հայկական տառերով, իբրեւ ՌՆԽԹ տարի:

(Պատասխանը՝ յաջորդիւ: Նախորդ հանելուկին պատասխանն էր հաւ):



Տարբեր Հայեացքով



Էլի Հուլիշեան

with the complements of

**Restaurant Al-Mayass**




### ՀՈՐԻՋՈՆԱԿԱՆ


1. «Էն.Պի. էյ.»ի կազմերէն:
2. Դրոզոց - Արաբ իշխան:
3. Աղէկ - Նախամօր կողակիցը:
4. Աղցանի համեմարոյս - Խոշոր մուրճ:
5. Վաճառել - Թրքահայ երկլեզու շաբաթաթերթ - Զրասէր հաւ:
6. Ժողովրդային - «Ֆորմիլա 1»ի ամերիկացի մրցավարորդ:
7. Բոյոր - Եգիպտական դից - Անվախ:
8. Զայնանիչ - Նուրբ ալիւր - Ճափոնական դասական թատրոն:
9. Սիամանթոյի ծննդավայրը - Կիլիկեան նաւահանգիստ:
10. Կուռքերու նուիրուած զոհ - Նիհարնալ - Ռուսերէն՝ այո՛:
11. Ֆրանսայի նախագահական նստավայրը - Շաղկապ - Ատակ:
12. Ծնօտ - Խաշոյ, մսաջուր:
13. Յուցական ածական - Փոքրացնող մասնիկ - Դիւրագին - Պնակ:
14. Եգիպտահայ մամուլէն - հնուիեան պատճառով մաշած:
15. Պրագիլի Ֆուլթոնի ազգային խումբին մարզիչը - Ընդունարան:
16. Տղամարդ - Երիվար - Փորձանք:
17. Ամբողջացում - Ասիական մայրաքաղաք:
18. Օծանելիք - Էական բայ - Սուտանի լիճերէն:
19. Սանասարի ձայնեղ որդին - Եգիպտական լրատու գործակալութիւն - Արհեստաւորի ունեւեակ:
20. Այբուբենէն - Բառարանի մէջ՝ բառէ մը ուրիշ բառի մը դրկելը - Այբուբենէն:

### ՈՒՂՂԱՀԱՅԵԱՑ

1. Սպանացի թենիսիստէն - Այեր:
2. Վարսակալ - Զինկախառն պղինձ - Ռամկօրէն՝ այո՛:
3. Յապաւուած՝ արարական պետութիւն - Կոկորդի գեղձ - Ողիմպիական «կապոյտ» ցամաքամասը:
4. Կոնիոն, թունաւոր բոյս - Ճանճի ձայն - Յուցական ածական:
5. Տեղեակ - Անհատ - Հ.Մ.Ը.Մ.ի Մոնթրէալի մասնաձիւղը:
6. Զուրով մաքրել - Եկամուտ - Այսինքն:
7. Ածականակերտ մասնիկ - Անձնական դերանուն - Հրէական գատիկ:
8. Մոռկ - Արաբ պարոն - Տառի մը դրացիները:
9. Զաւակը մահացած - Բազմութիւն - Երկբարբառ մը:
10. Արշալոյս - Հեռացի՛ր:
11. Կրկնուած բաղաձայններ - Յուցական դերանուն - Նետ արձակել:
12. Այբուբենէն - Կղպուած - Իգական օտար անուն - Ճաշսեղանի սպասներէն:
13. Կենակից, կեանքի ընկեր - Բովանդակ:
14. Ռոնի Շնայտրի Ֆիլմերէն - Եղեգնացուպ - Դիմացի՛ր - Փիւնիկեան դից:
15. Փշողական նուագարան - Հովիւ - Ֆրանսական քաղաք - Աւելորդ ճիւղերը կտրէ:

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1															
2															
3															
4															
5	⬇														
6															
7															
8															
9															
10															
11															
12															
13															
14															
15															
16															
17															
18															
19															
20															

ԵՄԻՍԻՍԻՆ ԳԻՄՆԵՐԻՆԵՐ

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1		Պ	Ա	Յ	Է	Ր	Ն	Մ	Ի	Ի	Ն	Ի	Խ		
2		Մ	Ե	Ն	Ա	Ր	Ա	Ն	Ի	Ր	Ա				
3		Գ	Ե	Ն	Մ	Ա	Ր	Տ	Ա	Կ	Ա				
4		Ո	Ր	Ա	Յ	Ն	Ե	Ր	Մ	Ր					
5		Ձ	Ո	Ի	Կ			Ր	Ա	Մ	Ա				
6		Ն	Ո	Ի	Կ			Ի	Մ	Է	Ր				
7		Ո	Ի	Ն	Ա	Կ		Ա	Ր	Ա	Ր	Ա			
8		Վ	Ի	Մ	Ա			Ա	Յ	Տ	Ա	Ր			
9		Ա	Մ	Ո	Ի	Ղ	Տ	Ա	Տ	Ր	Ա	Ն	Օ		
10		Ք	Ի	Ե	Ի	Ա	Պ	Ա	Ր	Ա	Մ	Դ			
11		Տ	Ա	Ս	Ն	Ա	Մ	Ա	Ր	Տ	Ա				
12		Ի	Կ	Ջ	Ա	Ջ	Ա	Տ	Պ	Է					
13		Ո	Ե	Ո	Ի	Ր	Ի	Ի	Մ	Ա	Ն				
14		Ք	Ո	Ի	Ղ	Տ	Ո	Պ	Ո	Ն	Տ				
15		Ո	Ր	Լ	Ա	Յ	Ն	Ք	Ի	Ի	Լ	Ի	Կ		
16		Վ	Ա	Ղ	Ե	Մ	Ի	Ա	Ն	Տ	Ա	Ռ	Ա	Կ	
17		Ի	Կ	Ա		Մ	Ա	Ք	Ո	Ի	Շ				
18		Ձ	Ո	Ի	Ն			Ա	Խ	Ա	Տ	Ա	Ն	Ա	
19		Ի	Փ			Կ	Ա	Ն	Տ	Ի	Ա	Ն			
20		Ս	Մ	Ք	Ի			Ն	Ո	Ր	Ք	Ջ	Ի		



# Հ.Մ.Բ.Մ. ԱՄՄԱՆ

